Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

6344
6345
6346
6347
6348

9(62)
U-31

1295 1875
1909
1904
1892

738
916
50

Printed in Turkey

ԿՈՂՄՈՒՏԻՆ Ա. ԲԱՂԴԱՆՈՒՇ
ATELIER DE RELIEUR
A. PAGHTANOUCH
Tchakmakdjilar beyuk yéni han 5-6
Չաքմաքճըլար Մեծ Նոր Խան Թիւ 5-6

ՊՐՈՖ. ԳՐԻԳՈՐ ԽԱԼԱԹԵԱՆՑ

ՄԱՐԱԲԱ ՄԾՈՒՐՆԱՑԻ

ԿԱՄ

ԿԵՂԾ-ԱԳԱԹԱՆԳԵՂՈՍ

ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ



ՎԵՆՆՏԻԿ – Ս. ՂԱԶԱՐ

1898

2012

ՄԱՐԱԲԱ ՄԾՈՒՐՆԱՑԻ

ԿԱՄ

ԿԵՂԾ–ԱԳԱԹԱՆԳԵՂՈՍ

9(47.925)

ՊՐՈՖ· ԳՐԻԳՈՐ ԽԱԼԱԹԵԱՆՑ

ՄԱՐԱԲԱ ՄԾՈՒՐՆԱՑԻ

ԿԱՄ

ԿԵՂԾ-ԱԳԱԹԱՆԳԵՂՈՍ

(Հանոշած Բազմ. Հանդիսի ԾԶ հատորին)

ՎԵՆՆԵՏԻԿ - Ս· ՂԱԶԱՐ

1898

11176

2378
40

ԱԶԳ

Առաջիկայ քննական գրուածքը հանուած է Լազարեան Ճեմարանի ուսուցչապետ Գր. Խալաթեանցի ռուսերէն ընդարձակ հետազօտութիւնից՝ ՀԱՅՈՑ ՎԷՊԸ Մ. ԽՈՐԵՆԱՑՈՒ ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԷՋ. ՓՈՐՁ ԱՂԲԻՒՐՆԵՐԻ ՔՆՆԱԴԱՏՈՒԹԵԱՆ, որ լոյս տեսաւ 1896 թ. Մոսկուա։ Տես գլուխ Բ. «Անանունը (կամ որ նոյնն է՝ Մարաբա Մծուրնացին) իբրեւ յետին ժամանակի անվաւեր գրուածք», էջ 58–150։

Թրգմ. Լիպարիտ Նազարեանց

ՄԱՐԱԲԱ ՄԾՈՒՐՆԱՑԻ

ԿԱՄ

ԿԵՂԾ–ԱԳԱԹԱՆԳԵՂՈՍ

ԻՆՉՊԷՍ յայտնի է, Հայոց ամենանշանաւոր պատմական գրուածքներից մէկը, այսինքն Սեբէոսի պատմութիւնը՝ Հերակլ կայսեր մասին, որը երկար ժամանակ կորած էր համարվում, ներկայ դարուս 40–կան թուականներին գտնուեց Էջմիածնի գիտնական եպիսկոպոս Շահխաթունու ջանքով։ Այդ պատմութեան սկզբում կայ երկու հատուած, որոնք, ըստ երեւութին, չեն պատկանում Սեբէոսին և յետոյ են կցած նորան։ Այդ հատուածներից երկրորդը, որ ամփոփում է Պարսից Սասանեանների (227–652), Հայ Արշակունիների՝ մինչեւ Դ դարու վերջը, ու Հռոմ–Յունական կայսրների՝ Աւրեղիանոս

սից մինչեւ Հերակլ՝ ժամանակակցական ա-
զիւսակը, պատկանում է Ծ դարից ոչ վաղ
ժամանակամիջոցին։ Այդ երեւում է նորան
վերնագրից և սկզբից, որոնք Խորենացու և
Աստղիկի հետքերն են կրում։ Ցիշեալ հա-
տուածը չէ ենթարկուելու մեր հետազօտու-
թեան. մեզ համար կարեւոր է առաջին՝ հաւա-
նականօրէն աւելի հին հատուածը, որ պարու-
նակում է Հայոց նախնական պատմութիւնը
մինչեւ Հայ Արշակունիների երեւան գալը։

Այդ վերջին աղօտութիւններից և իրա-
կան կամ երեւացող հակասութիւններից ոչ
զերծ հատուածի հեղինակը՝ իւր յառաջաբա-
նում յայտնում է, որ ինքը մտադիր է
հաղորդել "զամն և զաւուրս հինգ թագաւո-
րացն", քաղելով այդ Մծուրնացի Փիլիսո-
փայ Մարաբայի գրքից, որ պարունակում
էր իւր մէջ Մծբնում՝ Սանատրուկ թագա-
ւորի ապարանքների աւերակներում գտնուած
քարի արձանագրութիւնը՝ յունարէն նշանա-
գրերով։ Այդ արձանագրութիւնը պարունա-
կում էր "զամն և զաւուրս հինգ թագաւո-
րացն Հայոց և Պարթեւաց"։ Արձանագրու-
թեան սկիզբն է. «Ես Ադաթանգեղոս գրիչ
գրեցի ի վերայ արձանիս այսորիկ իմով ձե-
ռամբ՝ զամն առաջին թագաւորացն Հայոց,

հրամանաւ քաջին Տրդատայ, առեալ ի դիւա-
նէ արքունի, զոր փոքր մի և ապա յիւրում
տեղւոջն տեսցես զպատճենն»։ Ցիրաւի,
հատուածի վերջում զետեղուած է երկու
ցուցակ Պարթեւաց և Հայոց թագաւորների,
ուր վերջինների շարքը անցնում է շատ հե-
ռու Տրդատի շրջանից, որի ժամանակն է
իբր թէ գրոշմած եղել այդ արձանագրու-
թիւնը, այսինքն մինչեւ 383 թ.։ Նախա-
բանին հետեւում է համառօտ առասպելը
աշտարակաշինութեան և հսկաների մասին.
սոցա մէջ զօրեղանալով Տիտանեան Բէլը,
սկսեց առաջինը իշխել երկրի վերայ։ Ցետոյ
պատմած է այն դիմադրութեան մասին, որ
ցոյց տուեց Բէլին Աբեթածին Հայկը, չը
կամենալով նորան ասուած ճանաչել, նոցա
ընդհարումը, որի հետեւանքն եղաւ այդ
երկու հսկաների պատերազմը և Բէլի սպա-
նումը՝ հզօր նետաձիգ Հայկի ձեռքից։ Ապա
հետեւում է Հայկի և նորա ժառանգների
բնակութիւն հաստատելը Արարատ երկրում,
որ յետոյ Հայք (Հայաստան) է կոչւում։
Հայկին միմեանց յաջորդող սերունդները
սոքա են. Արամանեակ, Արամայիս, Ամա-
սիա՝ Արամայիր քաղաք հիմնողը, Գեղամ,
Հարմա, Արամ, Արայ Գեղեցիկ, որը իր

անունով կոչեց Այրարատ գաւառակայրը։ Դոցա մասին հեղինակը խօսում է համառօտ և միայն վերջինի՝ Արայի մասին, աւելի ընդարձակ տեղեկութիւններ տալով Շամիրամի, նորա դէպ ի Հայոց նահապետը ունեցած սիրային յարաբերութիւնների վերայ, որոնք վերջացան Արայի սպանմամբ և Հայաստանը Ասորեստանցոց տիրապետութեան ներքոյ ընկնելով՝ մինչեւ Սենեքերիմ։ Այս վերջինի մահից յետոյ Հայերը ապստամբեցին Ասորեստանի դէմ, և երկիրը սկսեց կառավարել կորովի Զարեհը՝ Արամանեակի տոհմից։ Սորան մէկը միւսի յետեւից ժառանգաբար յաջորդեցին՝ Արմոդ, Սարհանդ, Շաւաշ, Փառնաւազ՝ մինչեւ Նաբուզոդոնոսորը, որին՝ այս վերջինս հպատակուեց։ Հատուածի հեղինակը անցողակի խօսում է և Փառնաւազի սերունդի մասին, յիշելով նորա որդոց՝ Բագամի և Բագարատի անունները։ Վերջինը ծնում է Բիւրատին, իսկ սա՝ Ասպատին։ «Որոնք Բագարատայ, ասում է հեղինակը, ժառանգեցին զժառանգութիւնս իւրեանց ի կողմանս արեւմտից. այսինքն է Անդեղ տուն. վասն զի կոչեցաւ Բագարատ և Անդեղ, զոր ի ժամանակին յայնմիկ ազգ բարբարոսացն ասուած կոչեցին»։

Յետոյ Հայերի վերայ տիրեցին Բաբելացոց, Մարաց (և Պարսից) թագաւորները՝ մինչեւ Աղեքսանդր Մակեդոնացին, որ «զամենայն տիեզերս հնազանդեցոյց ի ծառայութիւն»։ Այստեղ իսկ համառօտ պատմած է Աբրահամի աղախին՝ Մարսեակի (Մասեկ) Հայաստան գաղթելու և նորա սերնդի մասին նոյն երկրում։ Յետոյ նոր գլուխ է սկսում «Ապստամբութիւն Պարթեւաց», ուր հեղինակը պատմում է Թեսալացոց թագաւորի որդի՝ Արշակի ապստամբութիւնը Անտիոքոս Թէոսի թագաւորութեան ԺԱ՞ՐԷ տարում, նորա թագաւորանալը արքայական Բահլ քաղաքում՝ Քուշանաց երկրում։ Սորանից յետոյ գալիս է Արշակի պատերազմը Սելեւկիացոց թագաւորների դէմ, որոնցից Պարթեւաց թագաւորը գերի վարեց Դեմետրիոսին, իսկ նորա եղբայր Անտիոքոսին սպանեց Բաբելոնում։

Այս փառաւոր յաղթութիւններից յետոյ, Արշակ Մեծն՝ իր կեանքի 129-ը տարում և իր մահից մէկ տարի առաջ, թագաւոր է կարգում Հայոց վերայ իր որդի Արշակ Փոքրին՝ Մծբին քաղաքում նորա բաժին տալով. «զԱրուաստան առ երկրաւն Ցաճկաց, և առ երկրաւն Ասորւոց. և զկապուտակեայ առ Կիւ-

զիկեաւ՝ մինչեւ ցեզը ծոլուն մեծի արեւմտից. և ցհիւսիսոյ կողմանէ ի լեառն մեծ Կովկաս ,, : Նա ուղարկում է իր որդուն մեծ զօրքով և նախարարների ուղեկցութեամբ Մրծանից արեւմուտք : Այստեղ Արշակ Փոքրի առաջն է եղնում մեծամեծ ընծաներով անուանի իշխան Բազարատ Փառատեան՝ Արամանեակի տոհմից, պսակում է նորա գլուխը թագով, և նստեցնում ոսկեայ գահի վերայ, իսկ յետոյ տալիս է նորան կնութեան իր դուստրը : Արշակը նշանակում է Բազարատին Հայոց երկրի Ասպետ, "որ էր իշխան և հրամանատար ամենայն թագաւորութեանն, հրամանաց գլուխ և հայր աբքայի և եղբայր. որում ետ իշխանութիւն ամենայն այնոքիկ ,, : Նա կոտորում է հսկաներին, որոնք զօրաժողով եղան նորա դէմ Ասորւոց Միջագետքում :

Մեծն Արշակ չորս որդի ունէր. նոցանից մէկը, ինչպէս ասում են, թագաւորանում է Թեսալացւոց աշխարհում, երկրորդը՝ Կիլիկիայում, երրորդը՝ Պարթեւաց վերայ, իսկ չորրորդը՝ Հայաստան աշխարհում : "Եւ լինին ամենայն ամք Արշակայ կենաց իւրոց ՃԼ (130), և թագաւորեաց ամն յիսուն և վեց ,, (մի ուրիշ ցուցակով՝ 130 տարի նա միայն թագաւորել է) :

Ապա հետեւում են երկու ցուցակ Պարթեւաց և Հայոց Արշակունիների, որոնցից առաջինը վերջանում է Արտաւանով (226 թ.), իսկ երկրորդը՝ Արշակի որդի Պապով (մօտ 380 թ.) :

* * *

Այս յիշատակարանի մասին, սկսած 40-կան թուականներից մինչեւ մեր օրերը, գիտնականները շատ զանազան կարծիքներ են յայտնել :

Դոցանից առաջինը ակադեմիկոս Բրոսսէն է, որ, ծանօթանալով այդ զրուածքի հետ՝ երբ դեռ նա տպագրուած չէր, այն կարծիքը յայտնեց, թէ դա քաղուածք է Մովսէս Խորենացու պատմութիւնից (3-e Rapport sur un voyage archéologique dans la Géorgie et dans l'Arménie, 1849, թ. 49–55).

Միհրդատեանը, որին մենք պարտական ենք Սեբէոսի բնագրի առաջին հրատարակութեամբ, կարծում էր, թէ "արձանագրութիւնը ,, իսկապէս պատկանում է Դ դարու Ազաթանգեղոսին. այդ արձանագրութիւնը ձեռք է բերել Մարաբա փիլիսոփան և թարգ-

մանել է հայերէն՝ յունարէնից կամ ասորերէնից, իսկ Սեբիոսը գտել է Միջագետքում. թէ նա հասել է մեզ ոչ ամբողջութեամբ. թէ Ագաթանգեղոսը չէ տեսել Մար-Աբաս Կատինայի պատմութիւնը, որի մասին յիշում է Խորենացին, և թէ՝ վերջապէս, այդ յիշատակարանը կարող է ամենալաւ ապացոյց համարուել Մովսէս Խորենացու ճշմարտասիրութեան, որը կասկածի էր ենթարկուել եւրոպացի գիտնականների կողմից. (տե՛ս Ցառաջ. էջ ա-ժէ, և ծանօթ. էջ 15-26, Ա. տպագր. Սեբիոսի)։

Հանգուցեալ հայագէտ Լէմինը "Մեծն Վարդանի" ռուսերէն թարգմանութեան ծանօթութիւնների մէջ (Մոսկուա, 1861, էջ 54-57) անցողակի այն միտքն է յայտնում, թէ այն գրուածքը, որ առաջին հայ Աբշարունի թագաւորների հարցում հակասում է Մովսէս Խորենացուն, պատկանում է Սեբիոսին։

Մեր հետազօտութեան ենթարկուած Հատուածի ֆրանսիացի թարգմանիչ Լանգլուան (*Coll. des histor. de l'Arménie, T. I.*) յայտնում է իր կարծիքը անվճռողաբար. նա մերթ խոստովանում է, թէ "կեղծ Ագաթանգեղոսը" (այդպէս է անուանում նա

Անանուն հատուածի հեղինակին) իր առջեւը ունէր Մար-Աբաս Կատինայի բնագիրը, և աւելի մանրամասնօրէն է պատմում այն՝ ինչ որ Մովսէս Խորենացին միայն համառօտում էր. մերթ նա ընդունում է, թէ Անանունը ապրել է Մ. Խորենացուց յետոյ, և այդ վերջինի առասպելական պատմութիւնը մշակել է ինքնօրէն՝ իր աւանդածը աւելի հետաքրքրական անելու նպատակով։

Հանգուցեալ պրոֆէսոր Պատկանեանը իր հետազօտութիւնների, մէջ մի քանի անգամ վերադարձել է այս խնդրին։ Սեբիոսի ռուսերէն թարգմանութեան յառաջաբանում (1862, էջ զ-ժ), նա հիմնաւոր կերպով ապացուցանում էր, թէ Անանունի երկը, կամ՝ որ նոյն է, "Պատմութիւն ի Հերակլն" գրուածքի Առաջին Դպրութիւնը չէ պատկանում Սեբիոսին, թէ նա Մովսէս Խորենացու պատմութիւնից չէ քաղուած, ինչպէս ենթադրում էր Բրոսսէն, և թէ, վերջապէս, նորա մէջ պարունակուող "արձանագրութիւնը" և այլ պատմական աւանդութիւնները ծանօթ էին Խորենացուն, որը սակայն չը զետեղեց նոցա իւր պատմութեան մէջ, որովհետեւ նորա հակասում էին իւր կարծիքին և հայեացքին յայտնի անցքերի վերայ։ Բաց ի դրանից՝

թարգմանիչը այն միտքն է յայտնում, թէ մեզ հետաքրքրող հատուածը աղաւաղուած է հասել մեզ. նորա մէջ կան պակաս և անհասկանալի տեղեր։

Աւելի ուշ՝ 1875 թ., "Վանի արձանագրութիւնների,, մէջ (էջ 66–68), Պատկանեանը կերպարանափոխեց իր հայեացքը Անանունի հատուածի վերայ. նա եկաւ այն եզրակացութեան, թէ Սեբէոսի Առաջին Դպրութեան "Մարաբբա Մծուրնացին,, և Խորենացու "Մար-Աբաս Կատինան,, նոյն և մի անձնաւորութիւնն են։ Անկախ այս կարծիքից՝ նոյնը մի տարուց յետոյ՝ փոքր ինչ փոփոխուած, յայտնեց համբաւաւոր գերմանացի քննադատ Գուտշմիդը։ Երկու աստրի գիտնականների նոյն և մի անձնաւորութիւն լինելը, Պատկանեանի կարծիքով, բացատրւում էր այսպէս. "Մար-Աբասը (Մծուրնացին) կամ ով որ ծածկուած է նորա անուան տակ՝ Դ դարու գիտնական աստրին՝ պատահմամբ ներկայ է գտնուել Սեբէոսի յիշած ապարանքը պեղելու ժամանակ, և ընդօրինակել է այն արձանագրութիւնը, որ պարունակում էր Հայոց առասպելական պատմութիւնը։ Արձանագրութիւնը տարածուեց զանազան օրինակներով, որոնցից մէկը ընկաւ

նաև Սեբէոսի ձեռքը։ Բայց այդ նոյն արձանագրութիւնը առաջին անգամ տեղիք տուեց Մար-Աբասին (Մծուրնացի) կազմելու մի կեղծ, բայց աւելի ընդարձակ և ամփոփ հայկական պատմութիւն (Մար-Աբաս Կատինայի), որը և ընկաւ յետոյ Մովսէս Խորենացու ձեռքը,,։

Վերջապէս, իւր Նիւթեր հայկական բառարանի համար աշխատութեան մէջ (Բ, 1885, էջ 62) Պատկանեանը յայտնում է, որ Գուտշմիդի՝ այդ հարցին վերաբերեալ եզրակացութիւնները նա ընդունում է պայմանաւորապէս, չորոշելով սակայն, որո՞նք են այդ պայմանները։

23378
40

Այդ հարցի մասին աւելի խիստ ու որոշ կերպով արտայայտեց իր կարծիքը Գուտշմիդը իր „Ueber die Glaubwürdigkeit des armenischen Geschichte des M. von Khoren" (1876) հետազօտութեան մէջ։ Գիտնական հեղինակը ի նկատի է առնում այն հանգամանքը, թէ, չը նայած Անանունի խորենացու հետ ունեցած զարմանալի նմանութեանը (Հայոց սկզբնական պատմութեան մէջ), շատ կէտերում նկատւում են և խոշոր տարբերութիւններ, որոնք առաջացել են ոչ թէ պատահմամբ, այլ, կարծես,

վիտամբ լինին մուծուած։ Գուշմիդի կարծիքով նոյն ինքն թորենացին է հեղինակ Անանուն հատուածի, որը ծառայել է նորան որպէս առաջին ստուերագիծ (*den ersten Entwurf*), և որը Մովսէսը մշակել է և ինքնօրէն կատարելագործել, մասամբ, յիրաւի, ուղղելով նախկին սխալները, մասամբ նորա մէջ դեռ ցիրուցան երևացող հնարուածքներից հիւսելով վեմ առասպելների մի շարք։

Եւ այսպէս, գերմանացի քննադատի խօսքերից հետևում է, որ Անանունի յիշած "արձանագրութիւնը" հնարած է, ինչպէս և Ագաթանգեղոսի հեղինակութիւնը՝ կեղծած։ Նոյնպէս՝ չէ եղել երբեք ոչ Մար-Աբա Մծուրնացի և ոչ նորա գրուածքը (*l. c.* էջ 33 և յաջորդ.)։ Սակայն, դեռ Գուշմիդից առաջ պրոֆ. Հիւբշմանն („*Zur Geschichte Armeniens und der ersten Kriege der Araber*", 1875, էջ 4) անցողակի նկատել է, որ մեզ հետաքրքրող և՝ նորա կարծիքով՝ Սերիոսին չը պատկանող հատուածը յենվում է մի աղբիւրի վերայ, որը, հաւանականօրէն, մոռացածին է։

Անանունի մասին եւս աւելի անոնպատ էին խօսում՝ Վիեննայի գիտնական Մխիթարեան

Հ. Յովսէփ Գաթրճեան իր ձեռագիր աշխատութիւններից մէկում (տես Հանդէս Ամս. 1893, Գ էջ (ՄՀ և Հայոց Քննական պատմութեան հեղինակ՝ Մ. Գարագաշեանը. այդ գործը նորա անուանում էին անվաւեր զրուածք և կոպիտ պլագիատ (գրական գողութիւն), որը կազմուած է Է դարում։ Այս ասելով՝ նորա անկասկած յիշեալ գործը քաղուածք էին համարում Մովսէս Խորենացու Պատմութիւնից։

Վերջին տարիներում սկսեցին երևան գալ Տիբինգէնի աստուածաբանութեան պրոֆէսոր Ֆէթթէրի քննադատական յօդուածները Մովսէս Խորենացու մասին։ Նորա դեռ վերը յիշած նկատողութիւնից Խորենացու Սիբիլլայի վկայութեան մասին երևում է, որ նա նպատակաւոր ձգտումն ունի զէպ ի հին հայեացքը Մար-Աբասի մասին։ Նա աշխատում է ապացուցանել, որ Մովսէսը ունէր ասորի աղբիւրներ և մինչև անգամ ուղղակի ցոյց է տալիս Մար-Աբասի Դիրքը։ Մի և նոյն կարծիքը նա աւելի մանրամասնօրէն մշակում է իւր մի այլ յօդուածում "Մար-Աբաս Մծուրնացու զրքի" վերայ („*Festgruss an R. v. Roth zum Doktor-jubiläum*", *Stuttgart*, 1893, էջ 81–88), գալով հե-

տեւեալ եզրակացութեանը. “Մար–Աբասի գիրքը Մ. Խորենացին չէ հնարել, այլ միայն նորից մշակել է. Խորենացու ժամանակ ապրելիս է եղել սմն ասորի հեղինակ, որի իսկական կամ կեղծ անունը եղել է Մար–Աբաս, իսկ բնակատեղին՝ Մծբին։ Այդ Ասորու գիրքը, որի մէջ ենթադրելու է Պարթեւներին նպաստաւոր ուղղութեամբ գրուած մի ընդհանուր ժամանակագրութիւն, պարունակում էր Հայաստանի հնագոյն պատմութիւնը մինչեւ Արշակունեաց հարստութեան հիմնարկութիւնը։ Իւր պատմութեան բովանդակութիւնը, գոնէ Հայոց մասին, Մար–Աբաս քաղում էր ժողովրդական աւանդութիւններից,, (l. c. էջ 88)։

Բայց ի զորանից, Տիւբինգէնի պրոֆէսորի յօդուածից երեւում է, որ Խորենացու յիշած Մար–Աբասը (Կատինա) և Անանուն հատուածի Մար–Աբասը (Մծուրնացի) տարբեր անձինք են. բայց զոքա երկուսն էլ կախում ունին Մար–Աբասի հնագոյն խմբագրութիւնից, որից օգտուել են Մովսէս և Անանունը՝ իւրաքանչիւրը իւր կերպով։ Մինչդեռ առաջինը՝ Մովսէս, մշակում էր իւր աղբիւրի բնագիրը՝ ըստ իւր սովորութեան մացնելով նորա մէջ և բազմաթիւ նոր մանրամանութիւններ, երկրորդը՝ Անանունը, միայն կրճատեց այդ աղբիւրը՝ ընդհանրապէս հաւատարիմ մնալով նորան, սակայն բաց թողեց ժողովրդական աւանդութիւնները, որից Խորենացին՝ ընդհակառակը, օգտուեց ընդարձակօրէն *։

Այս հարցին վերաբերեալ վերջին և ամենից մանրամասն հետազօտութիւնը լոյս տեսաւ անցեալ (1894) տարուայ հոկտեմբերին ,, Византійскій Временникъ“ հանդիսում Ն. Յ. Մառի – Հայաստանի նախնական պատմութիւնը ըստ Անանունի խո-

* Պ. Ֆեթթերի երկու վերոյիշեալ յօդուածները, նոյնպէս և նորա՝ Վէտցերի ու Վելտի “Kirchenlexikon,, ի 88-դ տետրակում զետեղած (1893, էջ 1955–1963) Խորենացու կենսագրութիւնը, որոնք կրում են իրանց վերայ Գուտշմիդի հայեացքների հետքերը, թարգմանել է հայերէն հ. Յ. Տաշեանը և հրատարակել Վիեննայի “Հանդէս,, ամսագրում. սոքա լոյս տեսան յեռոյ և առանձին գրքոյկով (1895, Աղդ. Մատենադ. ժէ.) Տիւբինգէնի պրոֆէսորի Հայոց հոգեւոր գրականութեան վերաբերեալ միւս հետազօտութիւնների հետ, որոնք զետեղուած էին Nirschlի “Lehrbuch der Patrologie und Patristik,, հրատարակութեան մէջ։

բաղդով։ Այդ հետազօտութիւնը վերաբերում է Մ. Խորենացու Հայոց պատմութեան ապբիւրների խնդրին, և զբաղած է պրոֆ. Կարրիէրի քննադատական յօդուածների առիթով (*Nouvelles sources de M. de Koren, Vienne, 1893*)։ Ի հերքումն ֆրանսիացի պրոֆեսորի կարծեաց՝ իբր թէ Խորենացին և Մար–Աբաս Կատինան մի և նոյն անձնաւորութիւնն է (*M. de Koren et généalogies patriarcales, Paris, 1891*), և թէ՝ հետեւապէս, Աստրի գիտնականի հեղինակութիւնը Հայոց պատմագիրն է հնարել, — Ն. Յ. Մառը իւր ընդարձակ հետազօտութեան մէջ աշխատում է ապացուցանել պ. Կարրիէրի հայեացքի անհիմն լինելը։ Իրրեւ ապացոյց Մովսէսի յիշած ասորի ապբիւրի հասատութեան, նա ցոյց է տալիս Անանունը, որը, սակայն, հասել է մեզ "և ապաւազուած և թերաս,,։ Վերջինը, Ն. Յ. Մառի կարծիքով, Հայոց պատմագրութեան ամենահին յիշատակարանն է, որի հեղինակը աչքի է ընկնում իւր անաչառութեամբ և ճշմարտասիրութեամբ (*l. c.* էջ 291)։ Այլեւով Խորենացուց առաջ, Անանունը ծառայում էր իրրեւ նախնական աղբիւր Հայոց պատմագրին, որը իր կողմից մտցրեց մի քանի լրացումներ։

Ն. Յ. Մառի եզրակացութիւնները ամփոփուած են հետեւեալ կէտերում, որոնց հարկաւոր եմ համարում առաջ բերել ամբողջապէս (*l. c.* էջ 293–294).

1. «Հայոց նախնական պատմութեան մեզ հասած հնագոյն հայերէն յիշատակարանը Անանունի երկն է. սա հիմնուած է մասամբ առասպելական նիւթերի, ինչպէս խոստովանում է ինքը հեղինակը, մասամբ հինգ թագաւորների պատմութեան վերայ, որը անվաւեր զրուածքի ծագումն ունի. սրամիտեաւ՝ համաձայնելով Անանունի հետ, թէ այդ պատմութիւնը նա ձեռք է բերել Միջագետքում ասորի փիլիսոփայի աշակերտներից, մինչ նորա՝ ապարանքի աւերակներում գտնուելու մանրամասնութիւններում՝ չենք կարող չը նկատել անվաւեր զրուածքներին յատուկ կէտեր. նոյն իսկ Ագաթանգեղոսի անունն ևս մտացածին է»։

2. «Այդ անվաւեր Ագաթանգեղոսին կարելի է մերձեցնել "Հայոց զարձի,, հեղինակ համարուող Ագաթանգեղոսին, եթէ ընդունինք, որ "Դարձի պատմութիւնը,, առաջ շրջում էր առանց հեղինակի անուան և միայն յետոյ է վերագրուել Ագաթանգեղոսին, վերեւում պարզած թիւրիմացութեամբ (էջ 290–293)»։

3. « Անանունի գրուածքում ակնարկ անգամ չը կայ յուզուած հայրենասիրական տրամադրութեան, չէ երեւում նոյնպէս նորա ծանօթութիւնը անմիջապէս յոյն գրականութեան՝ պատմագիր Մովսէս խորենացու ջերմ և բացառիկ երկրպագութեան առարկային։ Անանունը պատում է բիբլիական աւանդութիւնների և ասորի իմաստութեան ու գիտնականութեան շրջանում. մի խօսքով՝ նորա պատմութիւնը արդիւնք է այն ժամանակի, երբ Հայաստանում սիրապետում էր ասորի քրիստոնէական քաղաքակրթութիւնը. իսկ այդ միանգամայն զուգադէպ է այն ժամանակին, որը որոշվում է ժամանակագրական աղիւսակներին կցած թագաւորների վերջին անուններով, այսինքն Դ դարու վերջովը և Ե-ի սկզբովը »։

4. « Անանունի գրուածքից յետ ժամանակի օգտուել է մի այլ անյայտ հեղինակ (տես Գ. Պատկանեան, "Վանի արձանագրութիւնները", Աֆոքէր լուսաւոր. Նոխտրաբ. 1875, յունուար, էջ 175, ծանօթ. 1), որը Ագաթանգեղոսի (Մարաբայի) արձանագրութեան հետ վերցնելով ինչ ինչ նաեւ Անանունի աւելացրածից և իւրակերպ մշակելով արդէն նորա աղբիւրներում եղած

մանրամասնութիւնները, լոյս ընծայեց Անանունի այդ կերպով մշակուած ամբողջ աշխատութիւնը ասորի իմաստուն Մարաբայի, կամ Մարաբասի անունով, և այսպէս ընկաւ անճոռնի հակասութեան մէջ, որովհետեւ առաջին Աբշակունու նախաձեռնութեամբ կազմած պատմութեան մէջ յիշած է նորա մահը և նկարագրած է նորա յաջորդ՝ Աբշակի թագաւորելը։ Այս յիշատակարանը (կեղծ — Մարաբայ) չէ հասել մեզ առանձին »։

5. « Մովսէս խորենացին՝ ծանօթ լինելով երկու յիշատակարաններին էլ, գերազասեց Անանունի նորագոյն՝ աւելի տարածուած և աւելի մանրամասն մշակուած աշխատութիւնը, որը իր ժամանակ Մար—Աբասի հեղինակութիւնն էր համարվում, և ամբողջապէս, զետ մի քանի իւր սեփական յաւելուածներով, մոցրեց իր Հայոց պատմութեան մէջ։ Նա պարունակում է Մ. խորենացու Ա. գիրքը Ը. գլխից սկսած և Բ գրքի առաջին ինն գլուխները »։

***

Առաջ բերելով գիտնականների ինձ ծանօթ կարծիքները՝ Անանուն հատուածի վե-

բաբերմամբ, ես գիտաւորութիւն չունիմ վի-
ճաբանել յիշեալ իւրաքանչիւր կէտի մասին,
որին ես սր և է պատճառով՝ համաձայն չեմ.
այդ ինձ շատ հեռու կը տանէր և կ'ընդլայ-
նէր ներկայ գլխի սահմանները, գուցէ մինչեւ
այս հարցին վերաբերեալ բոլոր՝ միասին
վերցրած հետազօտութիւնների ծաւալը։ Ներ-
կայ դէպքում ես աւելի յարմար եմ տես-
նում յայտնել իմ կարծիքս անկախ նախորդ
հետազօտութիւններից՝ կենտրոնանալով հե-
տեւեալ հինգ կէտերի վերայ, որոնք՝ ըստ
իս, սպառում են մեզ հետաքրքրող խնդիրը.

Ա. Ի՞նչ է ներկայացնում Անանուն հա-
տուածը և ի՞նչ աղբիւրների հիման վերայ է
նա կազմուած։

Բ. Ի՞նչ նպատակ ունէր հատուածի հե-
ղինակը։

Գ. Ի՞նչու է հատուածը կապուած յատ-
կապէս Սեբէոսի պատմութեան հետ, որպէս
նորա սկիզբը։

Դ. Ե՞րբ է գրուած այդ հատուածը։

Ե. Որպիսի՞ վիճակում է հասել մեզ հա-
տուածը։

Ա.

Անանուն հատուածի էութիւնը եւ նորա աղբիւրները

Ըստ ինքեան հասկանալի է, թէ որքան
մեծ նշանակութիւն ունի՛ր և է անվաւեր
գրուածքի նշաններ ունեցող գրական գործի
ուսումնասիրելը՝ արտաքին, ձեւական կողմից,
նորա՝ այսպէս ասած, նիւթի, այն է՝ լեզուի
և գրութեան ուսումնասիրելը, նոյն իսկ ա-
ռանց նորա բովանդակութիւնը ի նկատի
առնելու։ Այս ուղղութեամբ կատարած
քննայոյզ հետազօտութիւնը հանդիպեցնում
է հետաքրքիր գիւտերի. օրինակ, գրուածքի
իսկական աղբիւրները բացատրելու, նո-
րա կազմութեան ժամանակը որոշելու և
այլն վերաբերմամբ, — հետեւանքներ, որոնց
հազիւ թէ կարելի լինէր հասնել, եթէ մենք
այլապէս վերաբերուէինք անվաւեր գրուած-
քին։

Այդ իսկ խնդրով ես զբաղուեցի Անա-
նունի հետազօտութեամբ, որը՝ վստահա-
նում եմ յուսալ, թէ բաւական արդիւնաւէտ

հետեւանքների հասցրեց ինձ։ Ցիշեալ հատուածի բնագրի մանրամասն հետազօտութիւնից ես եկայ այն եզրակացութեան, թէ այդ հատուածը զարմանալի նմանութիւն ունի նախ և առաջ և ամենից աւելի՝ Սեբէոսի Պատմութեան հետ, որին նա կցած է և մեքենայաբար։ Այս նմանութիւնը, որ երբեմն նոյնութեան է հասնում, նկատվում է այդ երկու գրուածքի ոճի և գրութեան մէջ, նոցա դարձուածքների և լեզուի մի քանի ձեւերի մէջ՝ վերաբերութեամբ ոչ միայն քերականութեան, համաձայնութեան և բառագրութեան, այլ և այդ երկուսի մէջ միայն պատահող բնորոշ աշխարհագրական և ազգագրական անունների։

Մի՞ թէ դնեմք այդ հարցի մանրամասնութիւններին և ամենից առաջ նշանակենք Անանունին և Սեբէոսին ընդհանուր գրածուածքները և բնորոշ բառերը։

1) Սեբէոսը, որպէս Անանունի աղբիւր։

Բառեր և դարձուածքներ, որոնք ընդհանուր են Անանունին և Սեբէոսին.

ԱՆԱՆՈՒՆ	ՍԵԲԷՈՍ*
Էջ	Էջ
1. (գրոշմել) վիպասանութիւնս, (յիշատակել) առասպելս .	35.
— արքունական կայեանք .	58.
2. (նոյնպէս 3, 6 և 7 էջ.) հնազանդել ի ծառայութիւն .	79, 81, 106, 107, 138, 144, 149 (երկիցս), 150, 151, 152.
— լեռնոտն	148.
— ամենայն ազգս (նոյնպէս և Ս. Գրքում) . . .	61, 92.
— (նոյնպէս 4 և 5 էջ) տալ կալուած ժառանգութեան.	106.
3. մարտիկ	31.
— տուն հայրենի . . .	150.
— (նոյնպէս 7 էջ) ի գիմի հարեալ	23, 63.
— փախստական գնալ . .	81.
— (նոյնպէս 9 էջ) ոչ կարաց զգէմ ունել . . .	34, 51, 69, 104, 109, 150.
— գիմեալ գալ ի վերայ . .	37, 109.
— զինակիր (նոյնպէս և Ս. Գրք-	

* Հրտ. Ս. Պետերբուրգի։

ԱՆԱՆՈՒՆ	ՍԵԲԻՈՍ
Էջ	Էջ
քում) . . .	66.
— (նոյնպէս 4 և 9 էջ) սպառազէն, սպառազինութիւն)	22, 26, 29, 35, 38, 39, 67, 70, 81, 93, 107, 142.
4. կուռ սպառազինութիւն	67, 70.
— պնդել զՀետ (սեռակ. հոլով)	65, 94, 107.
— թափեցեց ի քեզ զկապարճս	75.
— վստահանալ (ի կուռ սպառազինութիւն) . . .	74, 99.
— ոչ կարացեալ վստահանալ (յիւր զօրացն բազմութիւն, նոյնպէս 7 էջ) . . .	74, 99.
5. լեռնակողմն . . .	29, 57, 93.
— առապար . . .	119.
— գետեղը . . .	106.
6. ապստամբիլ ի ծառայութենէ	31, 46, 71, 72.
7. ապստամբեալ ի քաց կալ ի ծառայութենէ . . .	81, 147, 151, 152.
8. և եղեւ պատերազմ մեծ առ Անտիոք քաղաքաւ	81.
— կապեալ ոտիւք և ձեռաւք	41, 70, 93.
— ճակատիլ ընդդէմ (Արշակայ)	112 և 74, 75.

ԱՆԱՆՈՒՆ	ՍԵԲԻՈՍ
Էջ	Էջ
— «անկանի ի վերայ նոցա յանկարծակի» . . .	105.
— «ի ձմեռն ժամանակի»	73, 93.
8. նեղ վայր . . .	52.
— սպառել զզօրն . .	50, 67, 71.
— ձերբակալ առնել (նոյնպէս և Ս. Գրքում) .	38, 39, 52, 59,
— ընդ առաջ ելանել .	68...
9. «ոսկիապատ գահոյք»	39.
— Ասպետ . . .	56, 98, 100–103, 108, 111, 114, 115, 116, 136.
— հրամանատար . .	99.

Աշխարհագրական և ազգագրական անունները, որոնք ընդհանուր են Անանունին և Սեբէոսին.

ԱՆԱՆՈՒՆ	ՍԵԲԻՈՍ
Էջ	Էջ
7. (նոյնպէս 8 և 9 էջ, երկիցս) Պարթեւք. . .	34, 36, 57, 59, 113, 137.

ԷՋ ԷՋ

— (նոյնպէս 9 էջ, երկիցս) Թեռ-
տալացիք . . . 23, 28, 30, 36,
137, 148, 152.
— (նոյնպէս 9 էջ,) արքայ Թեռ-
տալացւոց . . . 23, 36.
— (նոյնպէս 8 էջ,) Արեւելք՝
երկիր Քուշանաց . . 65, 13 և 47,
60, 121.
— (նոյնպէս 8 և 9 էջ, (երկիցս)
Բահլ Շահաստան . . 40, 67.
— (նոյնպէս 9 էջ, (երկիցս) Քուշ-
անք 25, 30, 60, 64
– 67, 137.
— (նոյնպէս և 9 էջ, (երկիցս)
«Բահլ Շահաստանի երկիր
Քուշանաց» . . . 67 նոյնպէս 30.
8. Կապկոհ (լեռն) . . 37, 143.
9. Մծբին քաղաք . . . 33, 45.
— «ի Մրծանայ, էջ 10 – Մըրծուին 37*, 58, 92
(երկիցս).
9. Արուաստան . . . 33, 37, 45, 122,
144, 146.

* Ս. Պետերբուրգի հրատարակութեան մէջ բաց է թողնուած 37 էջ, "Մրծուին"։ Տես Կ. Պոլսի հրատարակութիւնը, (էջ 64)։

ԷՋ ԷՋ

— Տաճկաց (երկիր) . . 37, 146, 152,
153.
— Ասորւոց (երկիր) . . 33, 37, 60, 72.
— Կապուտակեայ . . 146 (Կապուտ-
կացիք).
— Կիւղիկիա } . . 81.
— Կիլիկեցիք } . . 28, 131.
— «Լեռն մեծ Կովկաս» . 148 և 29.
— «Ամուր աշխարհն Մարաց». 92 և 107 (հմմտ.
նաեւ «Ամուր
երկիրն Գեղ-
մայ») 57, 58,
59.
— «Լեռն Զարասպ» . . 37, 94.
— Նոր – Շիրակ . . 37.
— Միջագետք Ասորւոց . 24, 71, 72, 76,
101.
— Աշխարհ, երկիր Հայոց . ամենուրեք.
9 և 10. Հայաստան աշխարհ,
երկիր . . . . ամենուրեք.

Ցեռոյ՝ Անանունի այսպէս անուանեալ «Ազաթանգեղեան արձանագրութեան» առաջին տողերը՝ իմ կարծիքով, Սեբիոսի

Խոսրով Ապրուէզի պատմութեան (590–627 թ.) յառաջաբանի համառօտութիւնն են։

Անանուն, էջ 1–2. Եւ Ագաթանգեղոս գրիչ գրեցի ի վերայ արձանիս այսորիկ իմով ձեռամբ զամս առաջին թագաւորացն Հայոց, հրամանաւ քաջին Տրդատայ՝ առեալ ի գիւանէ արքունի, զոր փոքր մի և ապայիւրում տեղւոյն տեսցես զպատճէնն։ Բայց ես նախ առաջին զվէպս յահեղն արքայ՝ և յարի այրն սկսայց ասել, նախ զնախնեացն պատմութիւնս՝ ուստի եղեւ սկիզբն ամենայն երկրի շինուածոց լրմանց և անտի ի սոյն պատուաստելոյ՝ յաւդել զզբուցակարգութեան վէպս՝ հսկայազանցն և զառասպելս ունայնս անհանճար զաւրացն։

Սեբիոս, էջ 35. Մատեան ժամանակեան, պատմութիւն թագաւորական, վէպ արիական («արիական» կը նշանակի և «քաջ»), վանուն տիեզերական, հէն Սասանական յԱպրուէզն Խոսրովեան.... Եւ արդ ես ճառեցից զեղեալսն յերկրի, զանցից կործանմանն առասպելս վիպասանելով.... և զարանց հսկայազանց, քաջաց սպառազինաց.... Եւ արդ ասացից զվէպս ի կործանիչն և յապականողն Խոսրով՝ յԱստուծոյ անիծեալն։

Մանաւանդ պէտք է մատնացոյց անել Անանունի մէջ Արշակ Պարթեւի (Բ դար նխ. ք. Քս.) իւր որդի՝ առաջին հայ Արշակունի Արշակին բաժին հանած սահմանների առասպելական մանրամասնութիւնների վերայ, որոնք բառացի նման են Սեբիոսի ճիշդ–պատմական ցուցմունքներին։ Հերակլի պատմագիրը առաջ է բերում յայտնի յափշտակիչ (usurpator) Վահրամ Միհրեւանդակի (նոյնը և Զուբին, Զ դարի վերջին) Հայոց իշխաններին ուղղած նամակը, ուր այս վերջինս, թուելով այն բոլոր երկիրները, որոնք մի ժամանակ Հայոց թագաւորութեան սահմանների մէջ էին մտնում, խոստանում էր վերականգնել այդ տէրութիւնը, եթէ Հայերը համաձայնին օգնութիւն հասցնել նորան Խոսրով Ապրուէզի դէմ։

Անանուն, էջ 9.– Յայնմ ժամանակի թագաւորեցոյց Արշակ (Մեծ) զորդի իւր զԱրշակ փոքր կոչեցեալ ի վերայ աշխարհին Հայոց ի Մծբին քաղաքի։ Եւ զատուցանէ նմա սահմանս զԱրռաս-

Սեբիոս, էջ 37.– Եւ եթէ ես յաղթեցից (զբէ Վահրամ առ Մուշեղ Մամիկոնեան), երդուեալ ի մեծ աստուածն Արամազդ... եթէ ձեզ տուեալ լիցի իմ զՀայոց թագաւորութիւն։ Զոր և դուք

տան առ երկրաւն Տաճ-
կաց և առ երկրաւն Ա-
սորոց։ Եւ զԿապադովկիա
առ Կիշղիկեաւ՝ մինչեւ
ցեզր ծովոն մեծի ա-
ռեւմտից։ և ցՀիւսիսոյ
կողմանէ ի լեառն մեծ
Կովկաս (մի և նոյն լեա-
ռըն 8 էջ։ անուանուա-
ծ է «Կապկոն»), որ
ձգի ընդ կողմանս ա-
ռեւելից։ և անցանէ առ
սահմանաւն առ ամուր
աշխարհաւն Մարաց։ և
հասանէ ի լեառն Զա-
ռասպ, և անցանէ առ
Նոր Շիրակ երկրաւն։
Եւ յուղարկէ զնա ի
Մրծանայ (յէջ 10։
«Մրծոռին») ընդ յա-
ռեւմուտս։։։

կամիք՝ արասջիք ձեզ
թագաւոր։ Եւ թողում
ձեզ զամենայն երկիրն
Հայոց մինչեւ ցԿապ-
կոն (մի և նոյն լեառն
148 էջ, «լեառն մեծ
Կովկաս») և ցգուռն Ա-
ղուանից։ և յԱսորոց
կողմանէ՝ զԱրոռաս-
տան, զՄրծոռին (Ս։
Պետերբուրգի հրատար։
մէջ վերջինը բաց է
թողնուած, տես Կ։ Պոլ-
սի հրատարկ։ էջ 64) և
զՆոր Շիրակն մինչեւ
ցսահմանս Տաճկաց։
զի առ նախնեաւքն իսկ
ձեր լեալ է (sic!)։ և
ընդ արեւմտեան մինչեւ
ցԿեսարիա Կապադովկացոց։ Եւ ես մի իշ-
խեցիս քան զԱրասպ
(պէտք է լինի՝ (զ) Զա-
ռասպ, ինչպէս էջ 94)
անցանել յայնկոյս։։։

Վերջապէս և Անանունի հռչակաւոր յա-
ռաջաբանը յիշեցնում է մեզ մի և նոյն Սե-
բիոսին։ Ինչպէս Հերակլի պատմագիրը,

խոստովանելով՝ երեւի թէ համեստութիւնից,
իւր անպատրաստ լինելը այնպիսի նշանաւոր
ձեռնարկութեան համար, որպիսին է ընդար-
ձակ և բազմաբարդ պատմական աշխատու-
թիւն կազմելը, յենվում է իր վերջաբանի
մէջ «ի կարգս ուսումնասիրաց», այնպէս
էլ Անանունը, ձեռք զարկելով իւր աշխա-
տութեանը և լինելով «ոչ վարժ խուզակի»,
զիմում է «Մարաբայ փիլիսոփայի
մատեանի» օգնութեան։ Մի քանի բան էլ
յարատութիւն է (paraphrase) Սեբիոսի եր-
կու յառաջաբանների (էջ 23 և 35)։

Անանուն, էջ 1։
Եւ եղեւ ոչ ի կա-
մայ ակամն պի-
տոյից վարժ
խուզակի զանս-
տարագրել* (ես կար-

Սեբիոս, էջ 151։ Արդ
թէպէտ և վայրապար զբ-
բուցեալ տաղեցիս զբանս
ի կարգի պատմութեանս
ըստ անհանճար
խորհրդոց մատաց

* Այլ և այլ ենթադրութիւններ կան «զանստա-
բագրել» բառի ընթերցանութեան առթիւ.— հան-
գուցեալ պրոֆ։ Պատկանեան (էջ 1 Սեբիոսի ռու-
սերէն թարգմ.) կարդում էր «ջան ստորագրել»,
Ֆեբրեր (Mar Abas von Nisibis, l. c. էջ 84) «ան-
ստերիւր գրել»։ — Ն։ Ց։ Մառ (Визант. Врем..
էջ 279) — «զայն ստորագրել» (= զա[յ]ն ստո-
բագրել)։ Խոստովանում եմ, որ բոլոր յիշեալ ըն-

դում եմ՝ «զանստո-
րագրել) ժամանակ
և զնախնի քաջացն
ձեռնարկելով դրոշ-
մել վիպասանու-
թիւնս, զիմն յիշա-
տակել զառասպելս,
և ինոյն շարադրելով
ասացից զառ ի յա-
պայսն եղելոյ, և ցու-
ցից հ ա մ ա ռ ա ւ-
տիւք զարդեաց
ժամանակաց և զա-
իմոց, և ոչ ըստ ար-
ժանաւորս շնորհի
գիտութեան. այլ սա-
կայն անդր հայեցեալ ի
կարգս ուսումնասի-
րացն, և հաստատեցից
մարգարէական բարբա-
ռովն։....

Էջ 35... Եւ արդ եռ
ճառեցից զեղելոցն
յերկրի, զանցից կործան-
ման առասպելս վիպա-
սանելով, զի վերուստ

թերցուածների մէջ ես փոքր ինչ բոնազբօսութիւն եմ տեսնում։ Ես առաջարկում եմ "զանստարագրել" կարդալ "զանստորագրեալ" կամ "զանստորագրել" (ժամանակ), պատիւով անցեալ դերբայի վերջաւորութեան վերայ, որ շատ սովորական է ծեռագիրներում։ Այս նշանակում է "անստորագրեալ ժամանակ", որ միանգամայն յարմարվում է թէ համաձայնութեան և թէ տրամաբանութեան պահանջներին։ Արդ՝ "զանստորագրեալ ժամանակ" և "զնախնի քաջացն վիպասանութիւնս" կը լինին խնդիր սեռի "դրոշմել" բային, որ կախումն ունի "և հոգեւ" նախադասութիւնից։ Պատիւը "զանստորագրել" բառի վերջին վանկի վերայ կարող էր ժամանակից ընկնել։ Հեղինակը որոշ կերպով յայտնում է իւր դիտաւորութիւնը՝ նկարագրել անցքեր այնպիսի մի ժամանակից, որ ոչ ոք դեռ ստորագրած չէ։

ղեստիցս վերաբերութեան, զամս և զաւուրս հինգ թագաւորացն յիշատակելով։

Անդ հայելով ի մատեանն Մարաբայ փիլիսոփայի Մծոբնացւոյ։...

զարթուցանել որոմտութիւն...

Էջ 23–24... Յետ այսորիկ զարթուցեալ անհուն բարկութիւն և ըզվերջին զաղետս հինին, որ ի կողմանս հարաւոյ... Զայս ամենայն կամեցայ ի ձեռն գրոյս այսորիկ կարճառաւտ ձեզ վիպասանել։

Ակներեւ է, որ չէ կարելի ենթադրել հակառակը, այսինքն Անանունի բնագրի (ընդ ամենը 10 երես) ազդեցութիւնը Սեբէոսի վերայ։ Հերակլի պատմագրի ընդարձակ աշխատութիւնը ունի իւր ուրոյն, որոշ կերպով գծած կերպարանքը՝ բոլոր միւս հայ պատմագիրների կարգում՝ իւր լեզուի, ոճի, բառագրութեան և տեղագրական անունների յատկանիշներով, որոնք ծայրէ ծայր անցնում են ամբողջ հեղինակութեան միջով և սերտ կապուած են նորա բովանդակութեան հետ. այն ինչ Անանուն հատուածը ներկայացնում է, ինչպէս կը տեսնենք, խայտաբղէտ հատուածու զանազան ազբիւրներից։ Բաց ի դրանից, Սեբէոսի Պատմութիւնը՝ ի զանա-

զանուիթիւն Հատուածի անվաւեր և առասպելական բովանդակութեան, ներկայացնում է ճիշտ — պատմական անցքեր, որոց նկարագրող հեղինակը եղել է ոչ միայն ժամանակակից, այլ ոչ սակաւ անգամ և ականատես։

Ստորեւ մենք կը տեսնենք, որ՝ բաց ի արտաքին նմանութիւնից, Անանունի և Սեբիոսի մէջ կայ և ներքին կապ։

2) Ս. Գիրք։ — Անանունի երկրորդ աղբիւրը Սեբիոսից յետոյ՝ ես համարում եմ Սուրբ Գրքի հայերէն թարգմանութիւնը։

Նախ և առաջ մեր Հատուածում՝ մենք պատահում ենք բաւականաչափ թուով յատկանիշ բիբլէական դարձուածքների, իսկ երբեմն և ամբողջ քաղուածքների, որոնք յարմարցրած են Հայոց նահապետներին։

Այսպէս՝ Անանունի դարձուածքը (էջ 2) — "Եւ ծնաւ Աբրամնեակ ոչստերս և դստերս բազումս՝ յորոց անդրանիկն Ամասիա։ Եւ ծնաւ Ամասիա ոչստերս և դստերս բազումս՝ յորոց անդրանիկն Գեղամ... Հարմա... Աբրամ, — բառացի կրկնութիւն է Ծննդոց գրքի Ե գլխի՝ մի կողմից և Ա. Մնացորդաց Բ գլխի (տուն 25–27, 42 և 50) — միւս կողմից։

Անանունի դարձուածքը (էջ 5)՝ "Մեռաւ և Աբրամայիս, և կաշաւ զերկիրն որդի նորա Ամասիա։ Եւ ապա յետ նորա Գեղամ։ Մեռաւ Գեղամ՝ և տիրեաց որդի նորա Հարմա,,... մի և նոյնն է, ինչ որ Ա. Մնացորդաց գրքի գլ. Ա. 43–51.

Ծննդոց գրքից ևս (ԺԴ, 9–10, ԺԱ, 5) յարատութեամբ առնուած է Անանունի հետեւեալ հատուածը (էջ 3).

"Յայնմ ժամանակի թագաւորեաց ի Բաբելոն որսորդ հսկայ Բէլն Ցիտանեան... Եւ էր իշխան ամենայն ազգաց՝ որ սիրեցան ի վերայ երեսաց ամենայն երկրի,,։

Նոյն իսկ Աբարատ երկրի անունը (Անանուշն էջ 2, 4), ուր առաջին անգամ եկաւ Հայկ Բաբելոնից, և որի անուան տակ իմանալու է Արարատեանի մօտ գտնուած Հայոց հարաւային գաւառներից մէկը, վերցրած է անկասկած նոյնպէս Սուրբ Գրքից (Դ. Թագաւոր. ԺԹ, 37)։

Ս. Գրքից (Ծննդոց ԺԵ, 2) կախումն ունի Անանունը (էջ 6–7) և այնտեղ, ուր յիշած է՝ "Ի Դամասկոսէ, ասեն, գնացեալ զ Մաբսեակն (զմայրն Եղիազարու) զընդոծինն Աբրահամու ի Հայս,,(?)։ Մի և նոյն ժամանակ հարկաւոր է նկատել՝ որ Անանուն հեղինակը՝

Հայոց լեզվում արական և իգական սեռերի համար առանձին վերջաւորութեան պակասելու պատճառով, երեւի թէ՝ բիբլէական Մասեկ անուան տակ, որը նա Մարսեակ է շինել, հասկացել է Աբրահամի սարուկին, այլ ոչ թէ սարկուհուն, որպէս արդարեւ նա ներկայանում է Սուրբ Գրքի յոյն թարգմանութեան մէջ ըստ Եօթանասնից. "ὁ δὲ υἱὸς Μαςὲκ τῆς οἰκογενοῦς μοῦ, οὗτος Δαμασκὸς Ἐλιέζερ ,, ։

Մասնացոյց անեմ ի միջի այլոց Անանունի նաեւ հետեւեալ հետաքրքրական զարձուածքը (էջ 7). "Աղէքսանդր կայսր, Մակեդոնացւոց ,, , որը երկու անգամ կրկնվում է Ա. Մակաբայեցոց գրքում (Ա. 1, 2. 2)։

Սուրբ Գրքի ազդեցութեան եմ վերագրում ես նաեւ Հայոց հին նահապետների մեծագոյն մասի անունների կազմելը։ Բայց այդ չէ նշանակում՝ թէ Անանունը վերցրել է հին Կտակարանում առաջին պատահած անունները և յարմարացրել հայ նահապետներին։ Հետաքնին հայ հնախոյզը, որը նպատակ է դրել իրեն գտնել — ստեղծելու իր նախահայրերի անունները, նրբիմաստ միտք է յղացել՝ որոնելու նոցա հայրենի երկրի աշխարհագրական անունների մէջ և վերա-

ստեղծել նոցա ժողովրդական ստուգաբանութեան (volksetymologie) միջոցով, որ ծանօթ էր նոյն իսկ Սուրբ Գրքից. իսկ այդպիսի անունների զոյութեան հնութեանը՝ մասամբ և հաւաստիութեանը՝ գրաւական պէտք է լինէր՝ որտեղ հնարաւոր էր, ամենամեծ հեղինակութիւն ունեցող Գիրքը՝ Աստուածաշունչը։ Կանգ առնելով այդպիսի մտքի վերայ՝ հեղինակը, որ անշուշտ հոգեւոր կրթութիւն ունեցող մի անձնաւորութիւն էր, ուստի և անգիր գիտէր Սուրբ Գիրքը, — սկսել է պտտել սորա մէջ Հայաստանի իրեն յայտնի համեմատաբար ոչ այնքան մեծ շրջանի տեղագրական անուններին զուգադէպ կոչումներ, — այն շրջանի, որին սահմանակից են Առաջին Հայք, Հարք գաւառը, Տուրուբերան, Հայոց կենտրոնական Այրարատ աշխարհը, և վերջապէս սորան կից՝ Գեղարքունի գաւառը։

Նախ և առաջ որոշելու էր Հայոց նախահօրը։ Սորա անունը՝ հարկաւ, պէտք է մերձաւոր յարաբերութիւն ունենար Հայք երկրի և ժողովրդի ազգային կոչման հետ, և զէթ կողմնակի կերպով հաստատուէր Սուրբ Գրքով։ Եւ յիրաւի, խորամիտ հեղինակը գտաւ իր նպատակին կատարելապէս պատշաճ մի ա-

նուն Հայկ (ազգի անունը՝ Հայ+կ փաղաքշական վերջաւորութեամբ)՝ հին Հայերին ծանօթ առասպելական ազգնախնիք Հայկի անձնաւորութեան մէջ, որ համապատասխանում էր Յունաց Որիոնին, և որի փոխարէն իսկ զրուած է նա Աստուածաշնչի հայ թարգմանութեան մէջ[1]։ Համաձայն հեղինակի բիբլէական հայեացքներին ազգերի ծագման վերաբերմամբ՝ Հայոց նախահայրը պէտք է Յաբեթի սերունդից մէկը լինէր. դորա համար հողն անգամ նախապատրաստուած էր։ Հայաստանի առաջին քրիստոնեայ մատենագիրները, հետեւելով նման հայեացքների Հայոց ծագման մասին, զուցէ ոչ առանց Եւսեբիոսի Քրոնիկոնի[2] ազդեցութեան, առաջաց-

1. Մարգ. Եսայեայ ԺԳ, 10, – իսկ Յովբ ԼԸ, 31։ Տես նոյնպէս Գրիգոր Նազիանզացու հայերէն թարգմանութիւնը "Առ որս,, ուր պատահում է Հայկ՝ Որիոն համաստեղութեան նշանակութեամբ։ Տես Հայկազ. բառ. "Հայկ,, բառի տակ։ Տես նաեւ հետաքրքիր առասպելական տեղեկութիւնները Հայկ–Որիոնի մասին՝ Ռ. Ղ. Ալիշանի "Հին հաւատք Հայոց,, Բազմավէպ (1894, յուլիս)։

2. Հմմտ. *Euseb.* Chron. Gr. p. 12 (նաեւ *Aucher*, II, p. 7, Chronograph. *Syncel.* p. 39). Θοργαμὰ ἐξ οὗ Ἀρμένιοι.

նում էին իրենց ազգը Յաբեթի թոռ՝ Թորգոմից (Գիրք Ծննդոց Ժ.). նոքա այլապէս չեն անուանում Հայերին, բայց միայն "տուն,, "ազգ,, "որդիք Թորգոմայ,,[1]։ Անունը միացրեց Հայոց ազգի երկու ներկայացուցչին՝ բիբլէական և ազգային՝ ազգակցութեան կապերով, Թորգոմի որդի դարձնելով Հայկին։ Իրրեւ ժամանակակից աշտարակաշինութեան՝ Հայկը այդ իսկ պատճառով պէտք է մասնակից լինէր հին աշխարհի ամենանշանաւոր անցքին, և միայն լեզուների խառնակուելուց յետոյ դար Բաբելոնից հիւսիս՝ աշխարհի այն գաւառը, որ իբր թէ նորանից ստացաւ Հարք[2] կոչումը՝ այսինքն Հայրեր՝

1. Հմմտ. Ագաթանգեղ. (էջ 24, 582, 597, տպ. Վենետիկ, 1860) և Փաւստոս (Վենետիկ, 1832, էջ 1, 32, 65) – տուն, ազգ, լեզու, որդիք Թորգոմայ։

2. Այդ մերձաւորութիւնը, ինչպէս և ուրիշ շատ այդպիսիները, չեն դիմանում քննադատութեան. գաւառի Հարք անունը, նոյն և մի լինելով Հայր բառի յոգնակի ուղղականի հետ, սակայն միանգամայն տարբեր բառ է, ինչպէս երեւում է յոգնակի սեռականից. Հարք, սեռ. Հարքայ և ոչ թէ Հարանց (հմմտ. և Գարագաշեանի "Քննական պատմութիւն Հայոց,, Ա. էջ 149)։

վերաբերութեամբ նահապետ Հայկին՝ ազգի "հօրը,,։

Ինձ մինչեւ անգամ թվում է՝ թէ Անանունի առաջ բերած աւանդութիւնը Բաբելացոց Բէլի դէմ՝ Հայոց Հայկի ունեցած պատերազմի մասին՝ յառաջացել է ոչ առանց Սուրբ Գրքի ակնարկների ազդեցութեան, ակնարկների՝ որոնցից մեծ վարպետութեամբ օգտուել է մեր հեղինակը և կամ նորա աղբիւրներից մէկը։

Առիթ է տուել Երեմիայի գիրքը, ուր մարգարէն՝ գուշակելով Բաբելոնի և Բէլի անկումը (Ծ–ԾԱ), մարգարէանում էր, թէ՝ "Եւ ի վերայ նորա (Բէլայ) ազգ ի հիւսիսոյ. նա զիցէ զերկիր նորա յապականութիւն,,։ — "Ահաւասիկ գունդ զայ ի հիւսիսոյ... ազգն և վաղակաւոր ի ձեռին իւրում ... պատրաստեալք իբրեւ զհուր ի պատերազմ ի վերայ քո,,։ — "Եւ խնդրեցից զվրէժ ի Բէլայ ի Բաբելոն,,։ — Իսկ հիւսիսային ազգեր ասելով, Երեմիան՝ ինչպէս երեւում է ԾԱ գլխից, ակնարկում էր ոչ միայն Մարաց, այլ և Հայոց։ Մարգարէն ուղղակի ասում է. "Զայն տուք (ի վերայ Բէլայ և Բաբելոնի) Այրարատեան թագաւորութեանց և Ասքանազեան գնդին,,։

Այսչափը բաւական էր նրբամիտ և ճարտար Անանունին ստեղծելու այն ակնարկի՝ հիմնուելով հիւսիսային ազգի՝ այսինքն Հայոց, առասպելական պատերազմը յանձին նոցա անուանադիր (eponyme) Հայկի՝ Բէլի — Բաբելացոց նոյնպիսի անուանադրի հետ։ Դժուար էր սորանից աւելի աջող և աւելի փառաւոր սկիզբն հնարել մի ազգի պատմութեան. աւանդութիւնը հաստատում էր Սուրբ Գրքի ամենահեղինակաւոր վկայութեան վերայ։

Մի քանի այլ մանր պարագաներ Երեմիայի գրքում, որպէս են՝ հիւսիսային ազգաց նետերի փառաբանութիւնը՝ "իբրեւ նետ իմաստուն պատերազմողի ոչ դարձցի ունայն,, (Ծ, 9), և կամ հիւսիսային ազգերին ուղղած հրաւէրը՝ "կազմեցէք աղեղոռնս, լցէք զկապարձս,,... (ԾԱ. 11), — Սուրբ Գրքից[1] քաղած այլ տեղեկութիւններ հետ միասին ծառայել են Անանունին՝

1. Հմմտ. օրինակ, Դ. Թագաւոր. գրքի Ը. 13 և Թ. 24 Հայկի արհամարհական խօսքերի հետ դէպի Բէլը և վերջինիս՝ Հայոց նահապետի նեռից կրած պարտութեան մանրամասնութիւնների հետ. (Անանուն, էջ 4)։

հիշսիսային երկրի և Բաբելոնի, Հայկի և Բէլի այդ ահեղ պատերազմի մանրամասնութիւնները նկարագրելու։

Երբ արդէն զտնուած էր ազգային անուանաղիրը՝ Հայկը, և զրուած էր Հայոց պատմութեան հիմքը, ո՞վ կարող էր աւելի մօտ լինել առաջին նահապետին, եթէ ոչ Հայոց միւս անուանադիրը, որ կազմուած է զրացիների՝ յոյների և պարսիկների հայերին տուած կոչումից — Αρμένιοι, *Armin*[1]։ Ցայտնի է, որ փրկչական թուից զեռ շատ առաջ յիշվում են Մեծ և փոքր Հայք (*Armenia Magna et Minor*). զոցանից վերջինը Դիոկղետիանոսի և Կոստանդիանոսի ժամանակ բաժանուեց երկուս՝ առաջին և երկրորդ Հայք, իսկ Յուստինիանոսի օրով առաջացաւ չորս Հայք[2], որոնցից Առաջին Հայքը (Πρότη Αρμενία), որ բովանդակում էր իր մէջ ի թիւս այլոց և Տարօնը[3], զբլ-

1. *Spiegel*, Die Altpersische Keilinschriften, 2 Auflage, p. 5։

2. Հմմտ. Հայոց Աշխարհագր. Ի դարու, հրատ. Ք. Պատկանեանի, Պետերբուրգ 1887, էջ 34։

3. Թովմ. Արծրունի, Պատմ. Պետերբուրգ 1877, էջ 107 "մերձ ի սահմանս Տարուանոյ Առաջին կոչեցեալ Հայոց,. — Հմմտ. նաեւ էջ 236։

խաւորապէս Արմինիկ[1] էր կոչվում։ Մի և նոյն զաւառումն էին զտնվում և Արմանեակ բերդն ու գիւղը[2]։ Ըստ երեւութին՝ յոյներն անգամ ուղղակի "Արմանեակ,[3] էին կոչում Հայերին։ Այդ իսկ անունը՝ այսինքն ազգի կոչումը "եակ,, փաղաքշական վերջաւորութեամբ, ընդունել է Անանունը՝ իբրեւ երկրորդ անուանադիր, իսկ նորա կրողին՝ մերձազգն ազգական է համարել Հայկին, կարգելով վերջինիս որդու տեղ։

Սուրբ Գրքումն է զտնում իր բացատրութիւնը նաեւ Արամանեակի Կադմ — ոս որդու անունը (Անան. էջ 2—4), չը նայելով իր յունարէն վերջաւորութեան։ Քրիստոսի Ի դարուց յետոյ յիշվում է Հայոց Կադմ—եան[4] մի իշխանութիւն. Անանուն հե-

1. Յովհան. կաթողիկ. Պատմ. Երուսաղ. 1867, էջ 23—24, 88. "Նախ զԱրմենին (հ. Մ. Զարնչեանի ձեռագիրը. Պատմ. Հայ. Ա, էջ 74 — Արմենիկ), զայն որ Առաջին Հայքն անուանիւր, Երկրորդ Հայք զնա Մօրիկ կոչեաց,,...

2. Թովմ. Արծր. Պատմ. էջ 194։

3. Յովհաննէս կաթողիկ. Պատմ. էջ 23։

4. Հմմտ. «ս. Ներսէսի վարքը» (Սոփերք, Զ, էջ 33), Շահխաթունեանի՝ Շերակացուն (Ի դ.) վերագրած Հայոց նախարարների ցուցակը,

զինակը նորա համար տոհմապետ է տեղ-
ծել յանձին Կադմ—ասի, յենուելով՝ գուցէ,
Աստուածաշնչի "Կիզմա,, կամ "Կիզիմ,,
կոչման վերայ, որ երբայեցերէն "արեւելք,,
է նշանակում, ("որդիք Կիզիմայ,, Ս. Գրքում
"կոչուած են, օրինակ, Իսմայելացիք, որ
բնակում էին,, ի զեռոյն Եգիպտացւոց մին-
չեւ ի զետն մեծ Եփրատ[1]. այստեղից է
և Անանունի "տուն,, կամ "կալուած,,
Կազմեայ (հմմտ. Պատկանեանի Վանի տա-
ճանագր. էջ 110—111)։ — Այդ կոչմամբ
մեր հեղինակը՝ երեւի թէ հասկանում է
հիւսիսային Ասորեստանին սահմանակից և
Միջագետքի հիւսիս—արեւելքում գտնուած
հարաւային հայոց Կորդուք գաւառը (Քսե-
նոփոնի Καρδοῦχοι), որ կարծես մի և նոյնն
է, ինչ որ իր յիշած Արարադը (ըստ Փաւս-
տոսի, Գ, 10, Սարարադ լեռան՝ Կորդուք
գաւառումն էր), որտեղ առաջին անգամ եկաւ
Հայկը Բաբելոնից։ — Այս հասարակ Ա-
նանունը որոշապէս գտնագտնում է հարաւային
Հայաստանի Արարադ երկիրը հիւսիսային

Հ. Բ. Եւս և Հ. Ղ. Ալիշանի "Այրարատում,,
մեջ բերածը։

1. Հմմտ. Գ. Ծննդոց, ԺԵ, 18, Ա. Մնացորդ.
Ա, 31. — Եզեկ. ԻԵ, 10. — Երեմ. ԽԹ, 38։

Հայաստանի Այրարատ գաւառավայրից. Հայկը
գալիս է Բաբելոնից նախ Արարադ. այստեղ
թողնում է իր թոռ Կադմոսին (այսինքն՝
Սուրբ Գրքում յիշած Կիզիմ երկրում) և ինքը
գնում դէպի հիւսիս՝ Հարք։ Բէլը հե-
տամուտ է լինում Հայկին, զիմելով հարա-
ւից՝ Արարադից. Հարք գաւառում Հայկը
սպանում է Բէլին և կրկին իջնում Արա-
բադ, իսկ իր որդի Արամանեակին պատուի-
րում է զիմել դէպի հիւսիս՝ Հարք։ Արա-
մանեակի սերունդները գնացին աւելի հեռու
դէպի հիւսիս և հասան Այրարադ գաւառա-
վայրը, որով և վերջանում է՝ Անանունի
ենթադրութեամբ, Հայաստանի բնակեցնելը
հարաւից դէպի հիւսիս՝ Արարադից (Սարա-
բադից) դէպի Այրարադ (Այրարատ)։

Շարունակելով Հայկի ծննդաբանութիւնը՝
հեղինակը՝ Արամանեակ անուան ազգեցու-
թեան ներքոյ, գտաւ և երրորդ նահապետին՝
Արամա—յիսին իրեն քաջ ծանօթ Եւսեբիոսի
Քրոնիկոնում, ուր մի քանի անգամ յիշուած
է համանուն Եգիպտացի թագաւորը[1]։

Ս. Գրքի ազդեցութիւնը նկատելի է մա-

1. Հրատ. Հ. Մ. Աւգերեանի, Վենետիկ,
1818, Ա, էջ 104, 111, 112. Բ, 60, 178։

նաւանդ Աբրամայիսին յաջորդող հինգ նա-
հապետների՝ Ամասիայի, Գեղամի,
Հարմայի, Արամի և Արայի անուն-
ների կազմութեան վերայ։

Հայոց մի անվաւեր զրուածքից յայտնի էր
Անանունին Առաջին Հայքին զրացի՝ Ամա-
սիա քաղաքի առասպելական հիմնադրի ա-
նունը, որ ըստ աւանդութեան, Հայերին էր
պատկանում հնումը[1]. Սուրբ Գիրքը հաստա-
տում էր այդպիսի անուան զոյութիւնը՝ ի
միջի այլոց՝ յանձին Եբրայեցոց Ամասիա
թագաւորի (Բ, Մնացորդ. 27, 1, 26), —
և ահա առաջ է գալիս չորրորդ Հայոց նա-
հապետ՝ Ամասիա։

Նոյն կերպով կազմել է Անանունը և Ա-
մասիայի Գեղամ որդու և ժառանգի անունը՝
Գեղ լերան, Գեղ-աքունի լճի ու գաւառի ան-
զամ և զուցէ Գեղամ գաւառի կոչումների
հիման վերայ[2], և զորան ապացոյց է գտել
բիբլէական Գեղեղամը[3] (Նեհեմ. Է, 51)։

1. Հմմտ. Յովհ. կաթող. Պատմ. էջ 58. "Սոփերք,, ԺԶ էջ 55–80։

2. Հմմտ. Ստեփան Օրբէլ. Գեղամաքակ, հրատ. Մ. Էմինի, էջ 374։

3. Գեե՛լամ (Գեեղամ) ունի Վենետիկեան 1860 թ. հրատարակութիւնը. աւելի ճիշտ է

Դարձեալ, բիբլէական անուանների մէջ,
որոնք սկսվում են Ամ կամ Ար վանկով,
հեղինակը կարծես ինչ որ հայկական է գտնում՝
զուցէ, Արարատ—Եակին մերձեցնելով։ Այս-
պէս առաջ են գալիս. Հարմա՝ Հայոց վե-
ցերորդ նահապետը՝ երեւի թէ Հրաամայից
ձեւակերպուած[1] (Ա. Մնացորդ. Բ. 25), —
Հարմայի որդին՝ Արամը, որ համանուն է
Սեմի որդի Արամին (Ա. Մնացորդ Բ,
17, Բ, 34, և այլն), վերջապէս Արայ՝
Հայոց Արա—բաղ զաշտավայրից, որին ա-
նուանակից է գտած Մնացորդաց մի և նոյն
զրքում (Է, 38) յանձին Յաթերի որդի՝
Արայի։ — Արային "զեղեցիկ,, ածական
է տուած, որ ոչ այլ ինչ է, եթէ ոչ պարս-

Գեեղամ կարդալ. բայց այս բացատրվում է
նորանով, որ ղ ('լ) և զ տառերը՝ նմանութեան
պատճառով, շփոթվում են իրար հետ։ Հմմտ.
Բառարան յատուկ անուանց, հատոր Բ. Վե-
նետիկ, 1769։ Ըստ երեւութին՝ Խորենացու ձեռ-
քում եղած Սուրբ Գրքի օրինակում Գեե՛լամ
է եղել։ Զոհրապեանի հրատարակութիւնն ունի
Գեեղամ։

1. Հռամա, նոյնպէս Ռամա և Արամա — տես
Սուրբ Գրքի հայերէն թարգմանութիւնը. Յեսուս
Նաւեայ, ԺԸ, 25, Նեհեմ. Է, 30, և այլն։

կերէն արայ (ارا, آرای) բառի թարգմանութիւնը, որ իրաք "զեղեցիկ,, է նշանակում։ Իսկ այդ անուան փաստոսի և Եղնիկի յիշած առասպելական "Արա–լէզ,, էակի հետ մերձեցնելուց Անանունը մեծ վարպետութեամբ կազմել է Արայի և Շամիրամի սիրահարական պատմութիւնը՝ ինչպէս ես կարծում եմ, ոչ առանց ազդեցութեան — մէկ կողմից Դիոդորի պատմութեան՝ Ասորեստանի թագուհու մասին, և միւս կողմից՝ զուցէ, Կղեմէս Աղեքսանդրացու յիշած աւանդութեան էր[1] Հայի մասին (Ἥρός)։ Այդ հարցի առթիւ մենք աւելի մանրամասնօրէն կը խօսինք մեր հետազօտութեան Ե գլխում։

Այսպիսի ստուգաբանութեան շնորհիւ և Հայոց Մասիք (Արարատ) լեռն իր ծագումը ստանում է Աբրահամի սարկաւագներից մէկի՝ բիբլէական Մասեկի անունից (Ծննդոց, ԺԵ, 2), որ իբր թէ Հայաստան էր փախել։ Նոյն իսկ նորա սերունդների անունները՝ Փառոխ, Փառոխտ և Փառական, որոնք՝

1. Հմմտ. նաեւ բիբլէական՝ Յուդայի անդրանիկ "էր,, ին. Ծննդ. ԼԸ, 3, Ա. Մնաց. Բ, 3, Դ, 21, և այլն։ Դիոդոր գիրք Բ. Կղեմէս, Stromata, V.

Անանունի ասելով, բնակուել են Գեղլերան մօտ՝ կազմուած են, ինչպէս ինձ թվում է, նոյն լերան շուրջը գտնուող վայրերի աստղագրական անուանների հիման վերայ։ Այդ կարող էր թելադրել մեր հեղինակին Գեղլերան կոչման նշանակութեան (գեղեցկութիւն) նմանութիւնը յիշեալ անունների հետ, որոնք սկսվում են փառ խօսքով, որ պարսկերէն նոյնպէս գեղեցկութիւն է նշանակում[1]։ Արդ՝ փառախտոր բերդ և աւան էր Այրարատի Կոգովիտ գաւառում, որ յիշում է Եղիշէն (Վենետ. հրատ. 1859, էջ 60)։ Նոյն տեղումն էր, երեւի թէ, և Ազաթանգեղի յիշած (էջ 164) "դաշտն Փառական,,. Փառական էր կոչվում նաեւ Սիւնեաց երկրի գաւառներից մէկը, որ ձգվում էր Գեղարքունի լճի հարաւային եղերքի տարածութեամբ. (Ստեփ. Օրբէլ. էջ 373)։

Անանունի պարսկերէն լեզուին ծանօթ լինելովը պէտք է բացատրել նաեւ Հայկի ութերորդ սերունդ՝ Արային յաջորդող Հայ նահապետների կազմութիւնը՝ այն է Սարհանագի, Շաւաշի, Փառնաւազի անդամ և Զա-

1. Տես Սեբէոսի հայերէն բնագիրը, հրատ. Պետերբուրգ, հրատարակչի ծանօթութիւնը, էջ 7։

թեռի, որոնք իրենց պարսկական ծագմամբ նկատելի կերպով զանազանվում են Հայոց առաջին նահապետների անուններից։ Տարօրինակ է թվում միայն այն՝ որ պարսկական անունները երևան են գալիս հայերի մէջ դեռ մարա–պարսկական տիրապետութիւնից շատ առաջ՝ Սենեքերիմից[1] անմիջապէս յետոյ, երբ նոքա՝ ազատուելով Ասորեստանցոց լծից, մի առ ժամանակ անկախ էին

1. Տասն անգամից աւելի է պատահում Սենեքերիմ անունը Սուրբ Գրքում, մի և նոյն ժամանակ նորա հայերէն թարգմանութեան հին օրինակներում այդ անունը այլևայլ ձևերով՝ Սեննեքերիմ, Սեննաքերիմ, Սենաքերիմ, Սենեքարիմ, իսկ մի դէպքում (Գ. Մակաբ. Դ, 4) յունարէն Σενναχηρειμ փոխարէն գրած է Սանատարուկ (տես Մխիթար Աբբայ Բառգիրք յատուկ անուանաց, մասն Բ, Վենետիկ, 1769, էջ 206)։ Սենեքարիմ ունի և Անանունը։ Ափսոս միայն, որ այդ հետաքրքրական տարբեր ընթերցուածները (բացի վերջինից) Սուրբ Գրքի Վենետիկեան 1860 թ. հրատարակութեան մէջ հարթուած են։ Եզեկիելի ժամանակագր. մէջ՝ (Ա. էջ 20–22, 26. Բ, էջ 101) նոյնպէս պատահում են մի և նոյն անուան տարբեր ձևեր – Սենեքերիբ և Սենեքերիմ։

մինչև Հայաստանի նուաճումը Նաբուգոդոնոսորի ձեռքով (Անան. էջ 6)։

Արդարև, Սարհանգ athleta, pugnator նշանակութեամբ; ի միջի այլոց, պատահում է Wis ô Râmîn պարսկերէն հին վէպի մէջ, էջ 393. իբրև յատուկ անուն՝ նա, որքան ինձ յայտնի է, հայ մատենագիրներից և ոչ մէկի մօտ մինչև ԺԸ դարը չէ պատահում, միայն Թովմա Արծրունու շարունակողը (էջ 308)՝ ԺԱ. դարում, յիշում է մի ոմն "Սրահանգ Ելիմացի արիւնարբու և շաղղակեր, (որ) էառ յաւարի զգաւառն Վասպուրական"։ — Շաւաշը Զենդ–Աւեստայի Siyavaršna է և նոր պարսկերէնի Siâvušը. նորա հին ձևն է Siavachš (Ֆիրդաուսիի և Թաբարիի մօտ). տե՛ս Lagarde, Armen. Stud. էջ 116։ Հին հայ յիշատակարաններում Շաւաշ անունը մենք առաջին անգամ գտնում ենք "ս. Թադեոսի վկայաբանութեան" մէջ (հաւանականօրէն Ե դարու) ան վերջաւորութեամբ՝ իբրև գիւղի անուն՝ "քաղաքաղիւղն Շաւարշան" (Սոփերք. Ը, էջ 13 և 61)։ — Փառնաւազը պահլաւական ձևն հին–պարսկերէնի Φαρνάβαξος (տես Fiek, Sriech. Person.)։ Հայ մատենագիրներից Փաւստոսն է (Ե, 15)

առաջ գործածում այդ անունը տոհմական եւ վերջաւորութեամբ — Փառաւազեան։ — Զարեհը իր հնչական կազմութեամբ կարող է համապատասխանել Zariadrès-ին (Lagarde, Armen. Stud. էջ 53). իսկ ինչ վերաբերում է Սարհանգի նախորդ՝ Արմոգի անուանը, նա կարող էր փոխ առնուած լինել մի և նոյն աղբիւրներից, որոնցից առնուած են և վերոյիշեալ անուններից շատերը, այսինքն Սուրբ Գրքից։ Յայտնի է, որ Սուրբ Գրքի հայերէն թարգմանութեան մի քանի օրինակներում կարդացվում է ոչ սակաւ անգամ Արբոկ անունը, Արգոբի և Յաբոկի փոխարէն (Բ, Օրինաց, Գ, 4, 19, Դատաւորաց, ԺԱ, 13, և այլն)։ Մի այլ բառի հետ միաւորուած Արբոկ պատահում է և Սուրբ Գրքի յիշեալ վենետիկեան հրատարակութեան մէջ (Գ, Յեսու Նաւեայ, ԻԱ, 11, Թուոց Ա, 10) Քարիաթ-արբոկ ձեւում։ Ես ենթադրում եմ, որ Անանունը կարող էր առած լինել Արմոգ անունը բիբլէական Արբոկից, մի և նոյն ժամանակ նորա ձեռքի տակ գտնուած Հին ուխտի օրինակի մէջ Արմոգ է եղել՝ փոխանակ Արբոկի, որ առաջացել է մի և բ տառերի իրարու հետ շփոթելուց նոցա նմանութեան պատճառով (հմմտ. Սենեքերիմ և Սենեքերիբ), և կամ Անանունի Արմոգում մենք ունինք արտագրողների փոփոխած բիբլէական Արբոկ անունը։ — Մի և նոյնը, այսինքն բիբլէական ծագումը, կարելի էր վերագրել և Արմոգի նախորդ՝ Զարեհի[1] անուանը, եթէ Անանունի ծանօթութիւնը այդ անուան հետ պարսկերէնի միջոցով վիճելի լինէր։

Առանձին ուշադրութեան արժանի է Փառնեաշազի սերունդների ցուցակը, որից յատկապէս և սկսվում է Անանունի կողմնակալ կամ նպատակաւոր մասը։ Բազարատը՝ այդ երեւակայեալ տոհմապետը Բագրատունեաց փառաւոր իշխանների, որոնք կառավարում էին Հայաստանը երկու դարուց ի վեր (Է–Թ դար Յ. Քրիստոսի), իբրեւ իշխանաց իշխաններ՝ պարսիկների և արաբների տիրապետութեան օրով, և Թ դարում ձեռք բերին արքայական իշխանութիւն, — մեր հատուածի մէջ հասցրած է, յայտնի խորհրդածութիւնների շնորհիւ, խորին հնութեան, որ հաստատվում է զէթ բնականապէս Սուրբ Գրքի

1. Տես Գիրք Նեղեմեայ, ԺԱ, 24. Ա. Մնացորդաց, Ա, 44, Գ, 24։

հեղինակաւոր վկայութեամբ։ Անանուն Հատուածի հեռաքննին հեղինակին աջողել է գտնել այդ տոհմապետի անունը Նեւեւայ գրքում (Է. 59), ուր՝ Նաբուզոդոնոսորի բաբելոնական գերութիւնից վերադարձրած Իսրայելի որդոց ցուցակում արդարեւ յիշւում է Բազրատունիների կարծեցեալ նախահօր կոչմանը համանման "Փաքարաթ" անունը[1]։

Ինքը Անանունը իր աշխատութեան մէջ ի հարկէ չէ յենւում Սուրբ Գրքի վերայ և ոչ էլ մերձեցնում է Հրեայ Փաքարաթին Հայ Բագարատի հետ. այլապէս ասելով՝ նա չէ ցոյց տալիս մեզ մտածողութեան այն զործողութիւնը, որ կատարւում էր իւր մէջ այն րոպէում։ Բայց ճանաչելով մեր հեղինակի նուրբ եղանակները, նորա նպատակաւոր հետաքննութիւններն ու մերձեցումները, դժուար չէ հասկանալ որ Բագարատ անուան յիշելը, և այն իսկ և իսկ Նաբուզոդոնոսորից յետոյ, առաջացել է մարերի միաւորութիւնից՝ Սուրբ

1. Ս. Գրքի հայերէն թարգմանութեան մէջ այդ տեղում դրած է "որդիք Փաքարաթ", յունարէն՝ υἱοὶ Φαχαράθ. նոյն անունը Եզրի Բ Գրքում (Բ, 87) պատահում է Փաքերոթ կամ Փաքերովթ ձեւերով եւս։

Գրքի աղղեցութեամբ։ Այդ երեւում է նաեւ նորանից, որ Բագարատի հայր Փառնաւազը մեր Հատուածում ժամանակակից է համարւում Նաբուզոդոնոսորին, որին նա իբր թէ հնազանդուեց։ Բագարատը՝ հետեւապէս, իբրեւ Փառնաւազի որդին, այսինքն նորանից մի սերունդ յետոյ, կարող էր կենդանի լինել Հրէից գաղտման ժամանակ բաբելոնեան գերութիւնից, որը, ինչպէս յայտնի է, տեւեց մօտ 50 տարի։

Վերջապէս և Բագարատի այստեղ իսկ յիշուած կապը Անգեղ աստծու հետ (Անանուն, էջ 6) տանում է մեզ դէպի Սուրբ Գիրքը։ Դ. Թագաւորաց գրքում (ԺԷ, 30) Ասորեստանից Հրէաստան տեղափոխած այլ և այլ բարբարոս հեթանոսների կուռքերը թուելիս՝ ասած է ի միջի այլոց. "Եւ արք Բռբայ արարին զԱնգեղ („Καὶ οἱ ἄνδρες Χοὺθ ἐποίηςαν τὴν Νεργέλ")։

Այդ ցուցմունքները դարձեալ առիթ են տալիս Անանունին մերձեցնելու զոցա իր հայրենիքի աշխարհագրական և ազգագրական անունների հետ։ Նորան ծանօթ էր հին Հայոց Անգեղ–տան գաւառը (տուն, կալուած Անգեղեայ), որ սահմանակից էր Է–Ը դարերում Բագրատունիներին պատկանեալ

Ցարոն[1] գաւառին, որ և "Առաջին Հայք" կոչուած երկրի մասն էր կազմում. շատ հաւանական է, որ այդ իշխանութեան տիրապետութեան սահմանների մէջ էր գտնվում այդ ժամանակ և Անգեղ-տանի մի մասը, եթէ ոչ ամբողջ գաւառը։ Անանուն հեղինակը գիտէր նոյնպէս Ցարոնին և Անգեղ-տանը սահմանակից՝ Բագրատունիներին անձնատուր Խոյք գաւառի բնակիչների մասին, թէեւ նա չէ յիշում ուղղակի նոցա անունը և բաւականանում է միայն ակնարկելով նոցա "բարբարոսութիւնը", — այդ լեռնականների բնորոշ յատկութիւնը, որ գիտել են ժ. դարու մեր մատենագիրները[2]։

Այստեղ արդէն կան այնպիսի հիմունքներ, որոնցից Անանունը կարող էր բիբլէական անունների մերձեցումներ անել, այն է՝ Անգեղ ասածու և բարբարոս Քուրդ ժողովրդի՝ Անգեղ-տանի և բարբարոս Հայ ցեղի հետ (Խոյք)։ Իսկ այն իրողութիւնից, որ Բա-

1. Հմմտ. Սեբէոս, էջ 101. — Թովմ. Արծրունի, էջ 106..., 220. — Յովհան կաթողիկ. էջ 147—150. — Նոյնպէս Ասողիկ, Պետերբ. 1885, էջ 107։
2. Թովմա Արծրունի, էջ 120—121. Յովհան կաթող. էջ 150.

գրատուներները տիրել են, "Առաջին Հայքին" (Ցարոն) և նրա հետ միասին գուցէ և Անգեղ-տանին, նա նոյնացրեց երկու անունների՝ Բագրատունիների կարծեցեալ նախահօր՝ Բագարատին, որի մէջ հեղինակը ոչ առանց հիմունքի աստուածութեան գաղափար էր տեսնում (գուցէ Ագաթանգեղոսի աղաղեցութեան ներքոյ[1]), և Անգեղին, որի աստուածութիւնը հաստատվում էր Սուրբ Գրքից։

Ահա թէ որպիսի ճարտար, հանճարեղ և բարդ՝ զուգադրութիւններ, որպիսի նուրբ կշռադատութիւններ և ծածկախորհուրդ կողմնակալ նպատակներ ենք մենք տեսնում Անանունի Հայոց նահապետների անունների ընտրելու և յարմարցնելու մէջ, անունների՝ որոնք առաջին բերան երեւում են՝ իրրեւ մէջ բերած մէկը միւսի հետքից միանգամայն պարզ և բնական կերպով՝ առանց որ և է յետին մտքի, անգամ և առանց նպատակի։

3) Եշտեբիոս։ — Անանունի հետեւեալ աղբիւրը ես համարում եմ Եշտեբիոսի Ժա-

1. Տես Վենետ. հրատ. 1862. "դայը (Տրդատ) հասանէր ի քաղաքագեօղն Բագ-ուան, որ անուանեալ կոչի ի պարթեւական լեզուէն Դիցաւան"։

մանակագրութեան կամ Քրոնիկոնի հայերէն թարգմանութիւնը, որ կատարուած է յունարէն բնագրից՝ հաւանականօրէն Ն դարում։

Մեր հեղինակի ամբողջ պատմութիւնը «Պարթեւաց ապստամբութեան» մասին Մակեդոնացոց դէմ և նրանց կռիւները Սելեւկեանների հետ՝ սկսած Անտիոքոս Թէոսից մինչեւ Անտիոքոս Սիտերը, որին սպանեց Արշակը Բաբելոնում, այսինքն մեր ամբողջ Հատուածի հինգերորդ մասը (էջ 7 և 8), — քաղուածք է Քրոնիկոնից՝ մի քանի լրացուցիչ մանրամասնութիւններով, վերաբերեալ աշխարհագրական տեղեկութիւններին, որոնք, ինչպէս տեսանք, փոխ են առնուած Սեբէոսից։ Միեւնոյն ժամանակ՝ չը նայելով, որ հեղինակը աշխատում է խոյս տալ բառացի քաղուածքներից և աւանդել Եւսեբիոսի պատմածը իւր խօսքերով, բայց այդ չէ յաջողում նրան. յաճախ սպրդում են Քրոնիկոնի հայ թարգմանութեան խօսքերն ու դարձուածքները, ինչպէս կը տեսնենք խսկոյն Անանունի և Եւսեբիոսի բնագիրների բաղդատութիւնից։

Անանուն, էջ 7–8։ — Ապստամբուցիչն Պարթեւաց որ եղեւ ի յայս ժամանակի։ Եւ եղեւ յետ մահուանն Աղեքսանդրու կայսեր Մակեդոնացւոց, ծառայեցին Պարթեւք Մակեդոնացւոց ամս կԱ։ Բանզի թագաւորեաց Սելեւկիոս Նիւանովր ի Բաբելոն ամս ԼԸ*։ Անտիոքոս Սոտեր՝ ամս ԺԹ։ Անտիոքոս Թէոս՝ ամս Ժ։ Եւ յայսմ մեռասանեորդի Անտիոքայ արքայի ապստամբեալ ի բաց կացին Պարթեւք ի ծառայութենէ Մակեդոնացւոց։ Եւ թագաւորեաց Արշակ մեծ որդի արքային Թէոտաղացւոց ի Բահլ Շահստանի յերկիրն Քուշանաց։

Եւսեբիոս Քրոն. Ա. էջ 163։ Իսկ Սելեւկոս իբրեւ չոգաւ ի մէջքարքարոսաց (այն է՝ Պարթեւաց) և յաղթեաց, թագաւորեր. և անտի կոչէր Նիկանովր՝ որ է յաղթող, և ունէր ըղթագաւորութիւնն ամս ԼԲ...

(Բ. էջ 128, 117–դ Ողիմպիադի Ա. տարուայ և Աբրահամու 1705–դ տարուայ ներքեւ կարդում ենք։ Ասորւոց և Բաբելոնի և վերնոց կողմանցն թագաւորեաց Սելեւկոս Նիկանովր ամս ԼԲ)։ Զսա պայազատէ սորին որդի Անտիոքոս յԱպամայ՝ որ լինէր ի Պարսկաստանէ. և կոչեցաւ Սոտեր՝ որ է

* Այստեղ սխալմամբ, ինչպէս ես կարծում եմ, փոխանակ ԼԲ–ի դրած է ԼԸ, որ առաջացել է Ը և Բ տառերի նմանութիւնից։ Եւսեբիոսի մօտ ուղղիղ է։

շանաց, որում ամենայն ազգք արեւելից և հիւսիսոյ հնազանդեցան ի ծառայութիւն: Զուեաց խաղաց գնաց Արշակ արքայն ամենայն զաւրաւքն հանդերձ յարեւելից երթալ ի Բաբելոն, յառաջին թագաւորացն կալուածոն. զի անդ հաստատեսցէ զթագաւորութիւն իւր. եկն ե. հաս ի Բաբելոն: Իսկ Անտիոքոս իբրև եառեալ զի անչափ բազմութեամբ եկեալ հասեալ էր ի վերայ նորա Արշակ արքայն Պարթեւաց, այնուհետեւ ոչ կարացեալ վստահանալ յիւր զաւրացն

Փրկիչ, տիրեալ ամս ԺԹ. . . ի վախճանել ճառելոյն Անտիոքայ Սովտերի, յաջորդէ զիշխանութիւնն Անտիոքոս, որոյ կոչեցաւ անուն յորջորջանաց Թեառոս . . . . և ձգեալ ամս ԺԹ*) խոթացաւ և վախճանեալ յԵփեսոս . . . (Բ. էջ 130, 132դ Ողիմպիադի 3–դ և յԱբրահամէ 1766–դ տարւոյ տակ, որ համապատասխանում է ամի մեռաւաւներորդի Անտիոքայ՝ կարգում ենք. Պարթեւք ի Մակեդոնացւոց ապստամբեցին, և ի նոցանէ թագաւորեաց Արշակ, ուստի

* Ակներեւ գրասխալ է ԺԵի փոխարէն, ինչպէս գրուած է Քրոնիկոնում երկու դէպքում (Ա, էջ 170, Բ. էջ 130): Անանունի այդ թիւը կազմվում է 10 տարուց (Ժ) Անտիոքոսի թագաւորութեան մինչեւ Պարթեւաց ապստամբութիւնը և 5 տարուց (Ե) այդ դէպքից յետոյ:

բազմութիւն ի դիմի հարկանել վիրագին այնմիկ, և խոյս ետ յերեսաց նորա, փախեաւ և գնաց յԱսիասատան*: Եւ թագաւորէ ի վերայ Ասիասատանու ամս Ե. և ապա մի ըստ միոջէ թագաւորեն Մակեդոնացիքն յԱսիասատան ի ժամանակս ինչ: Եւ Արշակ արքայ հնազանդեցոյց ի ծառայութիւն զԱսորեստանեայս, որ ըստ (էջ 8) Անտիոքայ: Եւ զԲաբելացիս և զՊարսիկս և զՄարս և զերկիրն Հայոց մինչեւ ցլեառն մեծ Կպկոհ, և ի յեզր ծովուն մեծի արեւմըտից. թագաւորն Արշակ ի Բաբելոն ամս բազումս: Եւ եղեւ

և Արշակունիք): Զսա փոխանակէ երեց որդին Սեղեւկոս, որոյ անուն յորջորջանաց կոչէր Կալինիկոս . . . տիրեալ ամս ԻԱ. . . : Ունէր և զԳաղատացիս օգնականս յերկսին ճակատս, ի Լիդիացւոց աշխարհն Սեղեւկոս յաղթէր. բայց ոչ զՍարդիս առ և ոչ զԵփեսոս. քանզի Պտղոմէոս ունէր զքաղաքն: Իսկ իբրեւ ի Կապադովկիա և Միթրիդատէս երկրորդ խառնուրդք լինէին, երկու բիւրք նորա ի Բարբարոսացն (այն է՝ ի Պարթեւաց) անկեալ և ինքն սատակեալ պակասեր... Իսկ Անտիգոնոս եղբայր Կալինիկեայ՝ ընդ մեծ

* Թ. Արծրունուց առաջ հայոց մատենագիրներից կարծեմ չէ յիշվում «Ասիասատան» կոչումը:

յաւիսն հարիւր և տասներորդի չորրորդի Արշակայ արքայի Պարթեւաց. ի չորրորդումի թագաւորութեան Դեմետրիայ ի վերայ Ասիասատանի և Ասորւոց, մինչ Արշակ արքայ գնաց յարեւելս զաւրաժողով լեալ և Դեմետրիոս չուքաւ կալաւ զԲաբելովն։ Իբրեւ եռեսս Դեմետրիոս, զի այնչափ բազմութեամբ եկն եհաս ի վերայ Արշակ, տեղի ետ նմա և գնաց մինչև ցԱնտիոք և անդ ձակատեցաւ ընդդէմ Արշակայ ի պատերազմ։ Եւ եղեւ պատերազմ մեծ առ Անտիոք քաղաքաւ. հարկանեն և սրբաջոջեալ առնեն զզաւրն Դեմետրիայ. և ձերբակալ առնեն զԴեմետրիոս, կապէ զնա Արշակ արքայ ասիւք և ձեռաւք, և Փռիւգիայի շրջեալ՝ ընդ հարկօքն նուաճեր զքնաքնէսն... Եւ յաջորդէ զնա նորին որդի Աղեքսանդրոս, որ Սելևկոսն անուանեաց զանձն և կերանոս ի զօրացն կոչէր։ Զերիս ամս թագաւորեալ Սելևկոս յետ հօրն՝ ի Փռիւգացւոց աշխարհին սպանաներ... Զսա փոխանակէ սորին եղբայր Անտիոքոս, կոչեալով արարեալ զօրացն ի Բաբելոնէ և անուանեցաւ (մեծ), տիրեալ ամս ԼԶ... եկեալ հասեալ ի Շաւշայ. և ի վերին նախարարացն կալուածս, ամենայն համաջինջ սատակեր յեղիմացւոց հակառուն։ Զկնի Անտիոքայ պայազատեցին յաջորդաբար Սեղեւկոս՝ ամս ԺԲ, Անտիոքոս Եպիփանէս՝ ամս ԺԱ, Անտիոքոս նորին որդի՝

առնու զնայ յարեւելս ի Բահլ Շահասատան։ Իբրեւ եռեսս Անտիոքոս եղբայր Դեմետրեայ՝ եթէ ըմբռնեցաւ Դեմետրիոս ի ձեռս Արշակայ արքայի, ինքն թագաւորէ ի վերայ Ասորւոց և Ասիասատանի. զաւրաժողով լինի և գնայ ի Բաբելոն, զկնի տասն ամի։ Ապէ լինի սորին՝ եթէ թագաւորեաց Անտիոքոս եղբայր Դեմետրեայ և եկն ի Բաբելոն։ Լուծանէ Արշակ զԴեմետրիոս զկնի տասն ամի և արձակէ առ եղբայրն, որպէս զի խաւսեսցի ինչ առնել նմա. և Դեմետրիոս ոչ գնաց առ եղբայրն իւր ի Բաբելոն, այլ յԱսիասատան անցանէ։ Ապա խաղայ Արշակ ի Բաբելոն երեքտասան թիւրովք։ Յամի հարիւրերորդի քսանեւերորդի սուրբորամ Ա. և ամիսս Զ, Դեմետրիոս Սովտեր՝ ամս ԺԲ, Աղեքսանդրոս՝ ամս ԺԵ (աւելի ոչղիղ է՝ ամս Ժ. հմմտ. Քրոնիկ. Բ, էջ 134–6) Դեմետրիոս Դեմետրի՝ ամս Գ, Անտիոքոս Սիդեցի՝ ամս Թ։ Ա. էջ 166... Եկեալ հասեալ ի միմեանս Դեմետր ի Սեղեւկիայ և Անտիոքայ որդւոյ Աղեքսանդրի յԱսորւոց և յԱնտիոք քաղաքէ, յաղթեր Դեմետրիոս և թագաւորեր յառաջնումամ ամի ՃՈրդի Կիբորդի Ողոմպիադին։ Եւ ի միւս եւս ամն գումարեալ զօրս և խաղայր ի վերայ Արշակայ ի Բաբելոն և ի վերին աշխարհսն։ Եւ ի միւսումեւս ամին, որ էր երրորդ ամ հարիւրերորդ վաթսներորդ Ողոմպիադին ի դերսւթիւն ըմբռներ յԱրշակայ, զոր

զի թագաւորութեան իւրոյ իբրեւ մաւտ եղեւ ի Բաբելոն, անկանի ի վերայ նորա Անտիոքոս յանկարծակի ի ձեռն ժաւանանակի՝ ի նեղ վայրի. և ոչ կարեն զաւրել. սպառեն զզաւրն. զարկանեն եւ ընկենուն զԱնտիոքոս ի խոնարհ և. սպանանեն և ձերբակալ առնեն զՍելեւկիոս զորդին Անտիոքայ, զոր ուներ ասէ արքայ ի դրանն իւրում թագաւորին:

եւ տանել ի Պարթեւս պահել. ուստի և կոչեցաւ... Սիտիբիտէս, քանզի գերի չոգաւ, յերկաթս կապեալ կայր ի պահեստի: Եւ Դեմետրի եղբայր կրտսեր՝ որ կոչէր Անտիոքոս.. ի մացաւ՝ թէ եղբայրն Դեմետրիոս յանցեաւ և ի կալանս է, գնայր ի Սիտէ քաղաքէ և գայր ուներ զԱտորիս... թագաւորեր և սա ամս ինն... Իսկ ի չորրորդում ամին հարիւրերորդի վաթսներորդի երկրորդի Ողոմպիադին՝ Երկոտասան թիւրոռ գայր հասանէր Արշակ և սա խաբ կամեր գործել. արձակեր զեղբայրն նորա զԴեմետրիոս՝ որ ի գերութեանն էր, յԱսորիս: Բայց Անտիոքոս՝ քանզի ձեռն եկն եհաս ի վերայ յանձուկ տեղի (sic!) անկեալ ի

վերայ բարբարոսացն (այն է՝ Պարթեւաց), և սասակացուցանէր զպատերազմն, խոցեալ անկեալ մեռանէր, որոյ ներ ամ էր ի ծննդենէն: Իսկ զնորին որդի զՍեղեւկոս գեկեալ զհետ համբէն մատաղ հասակաւ՝ առեալ Արշակ արքայ տանէր գերի և թագաւորաբար պահէր: (Բ. էջ 138, 162–գ Ողիմպիադի Ա. տարուայ և Աբրահամու 1888–գ տարուայ ներքեւ կարդում ենք. Արշակ Պարթեւ զԱնտիոքոս ապրանանի):

Ա. էջ 167... Բայց դարձեալ միւս անգամ Դեմետրիոս՝ յերկրորդ ամի հարիւրերորդի վաթսներորդի երկրորդի Ողոմպիադին՝ թագաւորեր, զտասն ամ ի միջի ի գերիս լեալ...

Քրոնիկոնից իսկ (Ա, էջ, 20, 34...) ըստ երեւութին առաջին անգամ յայտնի էր Անանունին (էջ 5–6) և Ասորեստանի մեծահռչակ թագուհու անուան Շամիրամ հայկական ձեւը՝ փոխանակ յունական Սեմերամիս՝ի։

Երկու բնագրերի բաղդատութիւնից ակներեւ է, որ Անանունը ունէր իր ձեռքի տակ Եւսեբիոսի ժամանակագրութեան հայերէն թարգմանութիւնը։ Մի և նոյն ժամանակ՝ զիտամբ կամ Անանուն հեղինակի չը զիտենալուց՝ Արշակունեաց հարստութեան հիմնադրի վերաբերմամբ մեծ թերիմացութիւն է ծագել, որ կարօտ է բացատրութեան։ Խնդիրը այն է, որ 132–ղ Ողոմպիադի 3–ղ տարուայ և Աբրահամի 1766 թուականի ներքեւ, որ համապատասխանում է Անտիոքոս Թէոսի 11–ղ տարուան, յիշվում է Արշակ. «Պարթեւք ի Մակեդոնացւոց ապստամբեցին և ի նոցանէ թագաւորեաց Արշակ, ուստի և Արշակունիք» (Ժամանակ. Բ. էջ 130)։ Մի այլ անգամ 163–ղ Ողոմպիադի առաջին տարուայ և Աբրահամի 1888–թ. ներքեւ, որ համապատասխան է Անտիոքա Սիդետի 9–ղ տարուան, այսինքն առաջին յիշելուց 123 տարի

յետոյ, Արշակի մասին զարձեալ յիշվում է. «Արշակ Պարթեւ զԱնտիոքոս սպանանէ» (Անդ, Բ. էջ 138)։— Այդ երկու Արշակներին, որ ապրել են մէկը միւսից 122 տարի յետոյ, և որ՝ անկասկած, Պարթեւաց երկու տարբեր թագաւորներ են եղած՝ մէկը Արշակունեաց առհմապետը և միւսը՝ հաւանականօրէն, Արշակ Զ–ը կամ որ նոյնն է՝ Միրդատ Ա–նը, — Անանունը մէկ անձնաւորութեան տեղ է ընդունել։ Ահա՛ ինչու Պարթեւաց հարստութեան հիմնադիրը կամայ–ակամայ պէտք է 130 տարի թագաւորէր, որ հնարաւորութիւն ունենար Անտիոքոս Թէոսի ժամանակ ապստամբութիւն առաջացնել և սպանել Թէոսից յետոյ տաներորդ Սելեւկեան թագաւոր՝ Անտիոքոս Սիդետին։ — Մի փոքր յետոյ նկատելով այդ սխալը (եթէ միայն այդ ուրիշ անձի գործ չէ), Անանուն հեղինակը՝ երեւի թէ, նորան ուղղելու նպատակով, վերագրում է Արշակին 56 տարի թագաւորութիւն և 130 տարի կեանքի տեւողութիւն[1]։

1. Ագաթ. էջ 9. — Հմմտ. նաեւ Սեբէոսի ռուսերէն թարգմանութեան 26գ ծանօթ. էջ 175։— Միհրդատեանի օրինակում՝ 130 տարին Արշակի թագաւորութեան տեւողութիւնն է։

4) Բաց ի յիշեալ երեք գլխաւոր աղբիւրներից Անանունն ունէր նաև ուրիշ օժանդակ աղբիւրներ, ինչպէս են.

ա) Ագաթանգեղոս (Սկզբնական խմբագրութիւնը, Ե դ. սկզբում). նորա «Դարձի պատմութիւնից» Անանունին յայտնի է Տրդատ թագաւորը, որ՝ անկասկած Մեծն Տրդատն է՝ Կոստանդիանոս Մեծի ժամանակակիցը և Գրիգոր Լուսաւորչի եռանդուն օգնականը քրիստոնէութիւնը Հայաստանում տարածելու՝ Դ. դարու սկզբում։ — Ագաթանգեղի առաջին մասիցն է (նահատակութիւն Ս. Գրիգորի և Ս. Հռիփսիմեանց) վերցրել մեր հեղինակը, ինչպէս արդէն ասացի, նաև «Փառականն դաշտ որոց» (էջ 7). հմմտ. Ագաթանգեղի՝» որս առնել, երթեալ ի դաշտն Փառական...»։ (էջ 164)։

Աւելի ևս կարեւոր է նոյն պատմաբանի երկրորդ մասից արած քաղուածքը (վարպետութիւն Ս. Գրիգորի)՝ աշտարակաշինութեան վերաբերեալ հատուածից, որ Անանունը կերպարանափոխել է համաձայն իր նպատակին, ինչպէս երեւում է հետեւեալ բաղդատութիւնից.

Անան. էջ 2. .... ուստի եղև սկիզբն ամենայն երկրի շինուածոց լրմանց. և անտի ի սոյն պատուաստաւորեալ յաւդել զզրուցակարգութեան վէպս հսկայազանցն և զառասպելս ունայնս անհանճար զաւրացն, զոր ի մեծ երկանցն աշտարակին յողբիւն ծնանելով՝ ցրեր ընդ մեծ անապատ անթիւ, որ ի կայս անլուսոր ձայնից անդադար ի վերայ առն ընկերի առնոյր սուրն Տիտան. յորում առաջին թագաւորեաց ի վերայ երկրի։

Ագաթանգեղ. 463-5. Եւ հայեցեալ ի պատուհան յառաջին և կեալ ընդ հեղեղին սկսան գործել զաշտարակն... Իսկ յողբիւն նոցա (գործել զաշտարակն) ծնոյց զանլուսոր միմեանց ձայնիցն շփոթութիւն ... յղացան զանօրէնութիւն, ծնան զբազմաձայն լեզուաբաժանութիւն, զի մի լուիցէ այր ընկերի բարբառոյ, ի միմեանց մեկնելով ցրուեցան։

Վերջապէս Ագաթանգեղոսի յառաջաբանից կախում ունի և Անանուն Հատուածի մէջ բերած արձանագրութեան հեղինակի... աղբը կամ նախաբանը՝ հեղինակի, որ իրեն նոյնպէս Ագաթանգեղոս է անուանում և հաւասար կերպով ստանձնում է տաբեգրութիւն կազմելու քաջն Տրդատի հրա-

մանով։ Համեմատութեան համար գտնում եմ այստեղ երկու հատուածն էլ.

Անան. էջ 1. ... Քանզի զսիւնս տաճարին այնորիկ խնդրեալ ի դուռն արքային Պարսից, և բացեալ զաւերածն վասն սեանցն Ըստ դիպան արձանագրին դրոշմեալ ի վերայ վիմի զամս և զաւուրս հինգ թագաւորացն Հայոց և Պարթեաց յոռնարեն դպրոթեանք. զոր իմ գտեալ ի Միջագետս՝ ի նորին աշակերտացն կամեցայ ձեզ զրուցակարգել. քանզի այսու ունէր վերնագիրն այսպէս.

Ես Աղաթանգեղոս գրիչ գրեցի ի վերայ արձանիս այսորիկ իմով ձեռամբս զամս առաջին թագաւորացն Հայոց, հրաւիրանաւ քաջին Տրդատայ՝ առեալ ի գիւանէ

Ագաթ. էջ 18-20. ... Արդ հրաւիրան հասեալ առ իս սմին Աղաթանգեղոս որ ի քաղաքէ ի մեծն Հռոմայ և վարժեալ Հայրենի արուեստիւ Հռոմարէն և յոռնարեն սուսեալ դպրոցիւն, և ոչինչ կարի անտեղեակ լեալ ձեռնարկութեան նշանագրաց. և ի վերայ այսոցիկ հասեալ ի դուռն Արշակունեաց, զամս քաջի առաքինւոյ ուժեղ և պատերազմող Տրդատայ որ .... ոչ զիւր քաջութիւնն սուտ ինչ հրամայեաց մեզ վիպասանել, և ոչ զքմազարդ բանից ինչ առասպելս ուելի քան զարժանն ընթանալ... Արդ հասեալ առ իս հրաւանաւի ի մեծ արքայէն Տրդատայ,

արքունի, զոր փոքր մի և ապա յիւրում տեղւոյն տեսցես ըզպատճէնն։ Բայց ես նախ առաջին զվէպս յահեղն արքայ և յարի այրն սկսայց ասել նախ զնախնեացն պատմութիւնս.... կարգել ինձ ի ձեռնարկութենէ նշանագիւտ ժամանակագրացն պատմել նախ զՀայրենեացն գործս քաջութեան քաջին Խոսրովու...

բ) Փաւստոս Բիզանդ (նախնական խմբագրութիւնը Ե. դարու սկզբում.)։ Սորանից զիտէր Անանունը Սանատրուկ արքայ Հայոց և Մեծ Հայքում նորա շինած Մծուրք քաղաքի մասին (Հմմտ. Փաւստ. հրատ. 1832, էջ 5, 115 և 142 և Անան. էջ 1), նոյնպէս «Արալեզաց» առասպելի մասին, որ աւելորդ չէ բաղդատել Անանունի առաջ բերած զրոյցի հետ.

Անան. էջ 5-6. Գայ հասանէ ի դաշտն Արայի, և տայ պատերազմ ընդ Արայի, հարկանէ զզաւրն, և սպանանէ զԱրայ ի պատերազմին։ Եւ հրա-

Փաւստոս. Զ. 36, էջ 238. Եւ եղև իբրև տարան զմարմինն ըստ պարապետին Մուշեղի ի տոռն իւր առ ընտանիս իւր, ոչ հաւատային ընդանիք նորա

մայէ Շամիրամ տանել զդի նորա ի վերնատունն ապարանից իւրոց, և ասէ. Ես ասացից ասուածոց լիզուղ զվերս նորա և կենդանացուցի: Իսկ երբև նեխեցաւ դի նորա ի վերնատանն, հրամայեաց գաղտնի ընկենուլի վիհ և ծածկել: Եւ զարդարէ զմի զամն ի հոմանեաց իւրոց այր պատշաճող. և համբաւ հանէ զԱրայի լիզուղ ասուածոցն և յարուցանել: Ունի ի ծածուկ և ոչ ումեք ի ծանաւթից նորա ցուցանէ զնա. և այսպէս հանէ համբաւ Արաղեզաց տիկինն Շամիրամ:

Ես ենթադրում եմ, որ Բագարատի «Փառազեան» (Անան. էջ 6) կոչումն ևս, եթէ մահուն նորա.... Զի ասէին. Դորա յանթիւ ճակատ մտեալ էր. և վերս երբեք չէր առեալ. ոչ նեռ մի զիպեցաւ երբեք և ոչ այլոց զինու խոցեալ է զդա: Իսկ կէսք յառնելոյ ակն ունէին նմա. մինչև զզուլան կոճեղն կարեալ կցեցին, և հանին եդին ի տանիսն աշտարակի մեոյ, ասէին. թէ վասն զի այր քաջ էր, առղեզք իջանեն և յարուցանեն ըզդա: Պահապան կացին և ակն ունէին յառնելոյ, մինչև նեխեցաւ մարմինն: Ապա իջուցին յաշտարակէ անտի, և լացին թաղեցին զնա որպէս օրէն էր:

միայն դա Վարազեան[1] չէ, կրում է Փաւստոսի ազգեցութիւնը (Ե, 15):

Կարելի էր՝ բացի դրանից, մատնանիշանել Բէլի սպանման նկարագրութեան նմանութիւնը Անանուն հատուածում (էջ 4, տող 17–23) Փաւստոսի պատմած դէպքի հետ Ե, 43), որ նոյնպէս յիշեցնում է Բիբլիական մի նկարագիրը Դ. Թագաւորութեանց գրքում, Թ, 24. այսպէս.

Անան. էջ 4.... Եւ կանգնէ զկապարճոն ի գեռնոյ ընդ ինքեան յաղեղն (ձեռագրում՝ յաւուրն) ակայաւբէն կամարին, և ընդ գիրկս

Փաւստ. Ե, 43. էջ 254. Իսկ նա (Արտաւազդ Մամիկոնեան) ընդ գիրկս մտեալ հարկաւեր զայրն նետիւ. և կարանէ ի կարան

1. Հմմտ. Սեբէոս. Վարազտիրոց Բագրատունի (էջ 63), Վարազ-Սահակ Բագրատունի (էջ 117). (երկուսն էլ Է. դարու) նոցա որդիքը կարող էին Վարազեան կոչուել (եւ ազգանունի վերջաւորութեամբ), ինչպէս պատմութեան մէջ չը յիշուած՝ նոյնպէս Բագրատունի՝ Բիւրատից (որը, գուցէ, նոյնպիսի մականուն է, որպէս և Վարազ, կոչվում էր Սմբատ բիւրատեան, նոյն Է. դարում: (Հմմտ. նաև Ասողիկ (հրատ. Պետ.) էջ 101 և յաջորդ):

մտեալ զաւրութեամբ հարկանէ նետիւ ըղ-
տախտակս երկաթիս, և ընդ պղնձի վահանն
ի թափ անցուցանէ ընդ
մեջէն արձանն յեր-
կիր խարսխեալ վտա-
ռեալ նետն. և վաղվա-
ղակի յերկիր կործա-
նեալ զատուածակար-
ծեալ հսկայն. և զաւրք
նորա փախստական լի-
նէին: Եւ նոքա զհետ
մտեալ թափեցին ի նո-
ցանէ երամակս ձիոց
և ջորեաց և ուղտուց:

թափ հանեալ զնետն,
ցամաք ընկենոյր զնա:
Եւ առեալ զնիզակն
զհետ մտեալ փախս-
տեիցն, ընդ սուր հա-
նեալ ըղօրսն Մեհրու-
ժանայ... և ինքն մե-
ծաւ անուամբ և բա-
զում աւարաւ՝ զոր կա-
պուան թափեին ի զօ-
բաց թշնամեացն:

**Վերջապէս հարկաւոր է մատնացոյց ա-
նել Փաւստոսի յիշած (Ե, 44) մի հետա-
քրքիր դէպքը՝ հայ Արշակունի Վաղարշակի
(Փրկչ. Դ. դարու վերջում) ամուսնութիւնը
բագրատունի ասպետի դստեր հետ (sic!),
որը, ինչպէս ինձ թվում է, դիտմամբ է
փոխադրել Անանունը (էջ 9) Քրիստոսից
երկու դար առաջ: Մէջ բերենք երկու յի-
շատակարանների նման հատուածները.**

Անան. էջ 9. Եւ
յուշարկէ զնա ի Մբր-
ծանայ ընդ արևմուտս
զաւրուն մեծաւ եօթա-
նասուն հազարաց ըս-
պառազինաց. և մեծա-
մեծ իշխանաւք նախա-
բարաց հազարաց բիւ-
բաւորաց, որում ոչ
ոք կարէր զդէմ ուռնել
պատերազմաւ: Սմա
ընդ առաջ եղանէր բա-
գարատն Փառազեան
որդւոցն յորդւոցն Ա-
բրամանեակայ նախա-
բար մեծ հանդերձ զաւ-
բաւ: Մատուցանէ նմա
պատարագ ոսկի և ար-
ծաթ. և զարդարէ զնա
ի մէջ և ի վակաս.
պատկէ զնա ի թագ
հայրենի. և նստուցա-
նէ զնա ի վերայ ոս-
կիապատ ականակուռ
գահոյիցն և տայ նմա
զդրոշտ իւր ի կնոջ-
թիւն: Զսա արար Ար-
շակ արքայ ասպետ
Հայաստան երկրին, որ

Փաւստ. Ե. 44, էջ
255–256. Ապա յետ
այսր ամենայնի զօր ա-
բարեալ զօրավարն ըս-
պարապետն Մանուէլ
հանդերձ Արշակունի
տիկնաւն և մանկամբ-
քըն երկոքումբք՝ Ար-
շակաւն և Վաղարշա-
կաւն, հանդերձ ամե-
նայն բանակաւն Հայոց
մեծամեծ աւագայնովն
նախարարօքն երևեալ
հասանէր ի գաւառն
Կարնոյ. և ամենայն
տանուտերաւք ընդ նը-
մա: Եւ տայր սպարա-
պետն Մանուէլ զդրոշ-
տրր իւր Վարդան-
դուխտ կին Արշակայ
մանկանն Արշակունոյ
և փեսայ իւր առնէր
զնա: Առնէր հարսա-
նիս և եղբօր նորին Վա-
ղարշակայ և տայր նմա
զդրոշտր ասպետին բա-
գրատունւոյ ի Սպեր
գաւառէ, որ թագա-
ւորքն (ես կարդում եմ՝

էր իշխան և հրամանատար, ամենայն թագաւորութեանն հրամանաց ղլուխ, և հայր արքայի, և եղբայր, որում ետ զիշխանութիւնն տէրութեան այնորիկ։

թագաւորին) թագակապք լեալ էին ի ընտէ ազգին թագաւորութեանն Արշակունեաց..

գ) Եղիշէ (այժմեան խմբագրութիւնը[1]. Է. դարից ոչ յետոյ), սորանից փոխ առած է թվում Արմաշիր բերդի անունը, որ հնագոյն հայկական մայրաքաղաք է դարձրած (Եղ. էջ 60, Ան. 5).—բլուրն մանդեան «ընտրոշ դարձուածքը Գողիաթի վերաբերմամբ (Եղ. էջ 84), որ Անանունը (էջ 4) «մանդեան արձանի» է փոխել (Բէլ).—մի քանի բառեր և դարձուածքներ, որոնք հնագոյն հայ մատենագիրների մօտ չեն պատահում, օրինակ՝ խարսխել, վերաբերոշիւն և այլն։

դ) Յովհան Փիլիսոփայ[2] (Է. դարու առա-

1. Տես իմ նկատողութիւնը «Հանդէս Ամսօրեայ» թերթում, ապրիլ 1895 թ.։

2. Տես Յովհ. Փիլիսոփայի (որ և Օձնեցի) գրուածքների լիակատար հրատարակութիւնը, Վենետիկ, 1833։

ջին կիսում). սորանից է երևի թէ վերցրած «Տիտանեանաց» ածականը, որ կարծեմ, առաջին անգամն ենք պատահում սոյն մատենագրի մօտ, և յետոյ մի քանի մանրամասնութիւններ Բէլի մասին, թէ նա, օրինակ, ըստ Անանունի՝ (էջ 23) «ի վեր կարձէր զինքն քան զամենայն ազգս մարդկան՝ զիւրն ոչ ճանաչելով զբնոշիւն», — թէ «Բելն Տիտանեանաց... կանգնեաց զպատկերն իւր և ետ երկիրպագանել իբրև աստուծոյ» — և ըստ Յովհաննու՝ (էջ 36, 37) «զիւցազունք անուանեալ զեր ի վերոյ մարդկայնոյս համբառնային բնութիւն», — և՝ «Քաղդէացւոցն տեսեալ ի Տիտանեանեն զայն վիթխարի... աստուծաբանն իմն պատուեցին... ըստ իւրաքանչիւր լեզուաց այլաձևելով զնոցա անուն. Քուշացիք՝ Նեբրովթ, Բաբելացիք՝ Բէլ...»։ — Աստուծաբանն բառը նոյնպէս, կարծեմ առաջին անգամն է պատահում Յովհան Փիլիսոփայի մօտ։

Բայց յիշեալ օժանդակ աղբիւրներից զատ ևս մենք գտնում ենք Անանուն հատուածում այնպիսի ցուցմունքներ, որոնց ծագումը դժուար է բացատրել։ Այսպիսի տեղեկութիւնները կարող էին կամ առնուած լինել Անանունի օրերով ժողովրդի մէջ տարածուած

զրոյցներից, ինչպէս՝ օրինակ, կէս գրոց ու կէս ժողովրդական առասպելը Արայի և Շամիրամի մասին, որ՝ հաւանականօրէն, հարաւային հայկական ծագումն ունի, և կամ կազմուած է իրեն՝ հեղինակի աշխատութեամբ։ Վերջին տեսակին ես վերագրում եմ՝ ի միջի այլոց, և մեր հեղինակի հաստատութիւնը, որով Բագրատունեաց տոհմապետ Բագարատը արենակցութեան կապերով կապվում է Անանունի ձեռքով մարմնացրած նոյն իշխանութեան տոհմական կոչումների հետ, իբրև իր հարազատ որդւոց հետ, — այն է՝ Ասպատի (փոխանակ «Ասպետի») և Զ.ՈՐ — Է.ՈՐ զարերում բագրատունեաց կրած մականուն Բիւրատի՝ հետ (Անան. էջ. 6)։

Յետ այնորիկ, և՛ առաջին Արշակունու ժամանակ յիշուած Բագարատ փառազեանին վերաբերեալ մանրամասնութիւնները՝ «Արշակայ ընդ առաջ եղաւեր Բագարատ փառազեան նախարար մեծ հանդերձ զաշրոչ (երբ առաջինը մուտք գործեց Հայաստանի սահմանները), մատոռցանէ նմա պատսարագ ոսկի և արծաթ, և տայ նմա զդրշատր իւր

1. Տես փոքր ինչ վեր, ծանօթ։

ի կնոջիշն. զսա (զԲագարատ) արար (Արշակ) ասպետ Հայաստան երկրին, որ էր իշխան և հրամանատար, ամենայն բագաւորոչեան հրամանաց գլուխ». վերջապէս՝ «նա (Բագարատ) կոտորեաց զինկայսն, որ զաշրաժողով եղեն ի վերայ նորա ի Միջագետս Ասորոց....», — այս բոլորը իմ կարծիքով կարելի էր վերագրել Անանունի հնարագիտութեանը։ Սակայն մեր հեղինակը կարող էր ի նկատի ունենալ և իրեն ժամանակակից անցքերը բագրատունի իշխանների մէկի կեանքից, որոնք Ը.ՈՐ — Թ.ՈՐ զարերում առաջնակարգ զեր էին խաղում Հայաստանում, և փոխադրել այդ անցքերը՝ մի քանի փոփոխութիւններով, հեռու անցեալը՝ Բագրատունեաց իշխանութեան բացառիկ զիրքը շեշտելու նպատակով, այն զիրքը, որ իբր թէ խորին հնութեան էր հասնում։

Վերջապէս մնում է ասել Անանունի յիշած (էջ 9—10) Պարթեաց և Հայոց թագաւորների երկոր ցուցակի մասին, որոց ծագումը նոյնպէս անյայտ է։

Պարսից Արշակունիների թիւը՝ հաշվելով և իրեն՝ հարստութեան հիմնադիր Մեծն Արշակին — այստեղ տասնեւերկու է, որոնք միասին թագաւորում են 576 տարի։

Ո՛չ թագաւորների թուովը, ո՛չ նոցա անուններովը և ո՛չ էլ՝ վերջապէս, նոյն հարբասութեան տեղութեամբ այդ ցուցակը նմանութիւն ունի դասական մատենագիրներից և գրաքներից մեկ ծանօթ ցուցակին։ Համաձայն ճիշտ տեղեկութիւններին՝ Պարթևաց թագաւորների թիւը Անանունի բերած թուից երեք անգամ աւելի է. Պարթևաց թագաւորների 12 անունների միայն առաջինն և երկու վերջինները կարող են իսկական համարուել. իսկ հարստութեան տեղութիւն՝ 576 տարին, իսկականից հարիւր տարով աւելի է՝։

1. Տես Gutschmid, Geschichte Irans etc. — Իսկ ինչ վերաբերում է 576 թուին՝ այդ թիւը կարող էր ստացուել՝ իմ կարծիքով, նորանից, որ Անանունը ճիշտ չիմանալով Պարթևաց թագաւորութեան անկման ժամանակը, որոշել է նոյն անցքը մօտաւորապէս իւր ձեռքի տակ գտնուած աղբիւրների հիմամբ։ Յայտնի է, որ Եւսեբիոսի Քրոնիկոնը, որ ցոյց է տալիս Պարթևների երևման թիւը (Անախոքոս Թէոսի 11-դ տարին և Աբրահամի 1766 թ.) և աւարտվում էր Մեծն Կոստանդիանոսի 20-դ տարով և Աբրահ. 2343 թ., — չէ յիշում հարստութեան անկման ժամանակը։ Այն ինչ Անանունին յայտնի էր Ագաթանգեղոսից, որ Մ. Կոստանդիանոս ժամանակակից էր Տրդատին, որդուն Խոսրովի, որին սպանեց Պարթևաց գահը տապալող Արտաշիր Սասանեանը։ Շատ հեռամուտ չը լինելով ճշտութեան, Անանունը հանել է 2342-ից (Կոստանդիանոսի 19-դ տարին և մօտաւորապէս առաջին Սասանեան Արտաշիրի ժամանակը) 1766՝ (այն է՝ Պարթևների երևման և Արշակ Ա-ի թագաւորանալու տարին), — և ստացուել է 576։

Այսպիսի ակներև անհամաձայնութիւնների շնորհիւ, ամեն մի փորձ՝ հաշտեցնելու հակասութիւնները և մոցնելու այդ խառնաշփոթութեան մէջ որևէ բանաւոր հիմունքներ, կարող է վերջանալ, իմ կարծիքով, միայն անաջողութեամբ։

Գէթ ինձ համար մէկ բան անտարակոյս է. Անանուն հեղինակը իրեն նպատակ դրած լինելով ներկայացնել իր ընթերցողներին Պարթևաց և Հայոց թագաւորների ցուցակը, չունէր այդ վերջինը առձեռն պատրաստ։ Իրեն ծանօթ հեղինակաւոր գրուածքներում՝ զոցա թուում և Եւսեբիոսի ժամանակագրութեան մէջ, որ հաղորդում է, ի միջի այլոց, Մարաց և Պարսից թագաւորների լիակատար ցուցակները, — նա չը գտաւ ընդ-

հանրապէս Արշակունիների համար ոչինչ տեղեկութիւններ, բաց ի երեք թեթև, անցողակի կերպով արած նկատողութիւնից։ Ուստի նա ստիպուած էր ինքը յօրինել ցուցակներ նոյն եղանակով, որով արդէն գտնուած էին Հայոց նախնագոյն նահապետների անունները։ Եւ ի հարկէ շատ էլ վատ-զաւոր չէր հրապարակ հանել այսպիսի մի հնարուածք, որը՝ նոյն խնդրին վերաբերեալ ստոյգ տեղեկութիւնների բացակայութեան պատճառով՝ անգամ և համայնագէտ Եւսեբիոսի մօտ, — անհնարին էր ճշդրտել կամ վերաստուգել։

Յատկապէս Պարսից Արշակունիների համար Անանունը իր տրամադրութեան ներքոյ ունէր ընդհանրապէս Պարսից թագաւորների անուանները և միայն մի քանիսը Պարթեւաց. թէ մէկը և թէ միւսը նա քաղել է Մ. Գրքից, Եւսեբիոսից և ցուցէ, այլ երկու հայ մատենագիրներից։ Այդպիսի անուանները սակաւ չէին. զոյանից Արշակը (Ա. Գիրք Մակաբ. ԺԴ, 2–3. ԺԵ, 22. Եւս. Քրոն. Ա, էջ 166–167. Բ, էջ 130–138), համաձայն Եւսեբիոսին՝ անուանուած է հիմնադիր հարստութեան։ Միւնոյն անունը կրկնուած է ցուցակում ևս երկու անգամ։

Եւ այսպէս՝ 12 թագաւորներից երեքի անունը արդէն գտնուած էր։ Մնացեալ իններ կազմուած են այսպէս. Արտաշէս, Դարեհ, Արշաւիր, Արշէն (կարդա՝ Արշէս՝ ցուցէ, Արսաս) և Վաղարշ՝ Մ. Գրքից (Գիրք Եղբի, Եսթերայ, Ա. Մակաբ., Դանիելի և այլն) և Եւսեբ. ժամանակագրութիւնից (Ա, էջ 50, 89... Բ, էջ 114–122, 160). Վաղարշ, Արտաւան և Արտաշիր՝ Ագաթանգեղոսից (էջ 29, 31, 32). Պերոզ՝ Սեբէոսից (էջ 23–25). «Աշնաշ» անուան ծագումը, եթէ միայն սա ազատուած չէ, դժուարանում եմ բացատրել[1]։

Սակայն յիշեալ անձնաւորութիւններից իսկական Պարթեւաց թագաւորներ էին՝ Արշակ (Ա. և Բ.), Վաղարշ և Արտաւան։

Պարսից Արշակունեաց ցուցակի օրինակով կազմուեց և Հայոց Արշակունեացը (Անան. էջ 10)։ Հարստութեան հիմնադիր Արշակի մասին դժուար չէր զուշակել նոյն իսկ հարստութեան անունից և Եւսեբիոսի վկայու-

1. Iusti իրանագէտը իր Iranisches Namenbuch հետազօտութեան մէջ (էջ 4) Aśnas անունը համեմատում է նոր Պարսկերէնի śinas բառի հետ, որ նշանակում է kennend գիտցող. ճանաչող։

թիւնից (Բ, էջ 130՝) մինչև անգամ Պրոկոպիոսի ուղղակի ցուցմունքից զատ (De Aedif. III, 1), որ Անանունին կարող էր և անծանօթ լինել։ Մնացած 22 Արշակունեաց անունները մինչև Պապ (այսինքն մինչև Դ. դարու վերջին քառորդը Քրիստոսից յետոյ), մեր հեղինակը հաւաքել ու յարմարեցրել է իր նպատակին, կրկնելով նոցանից մի քանիսը երկու անգամ և մոցնելով նոյն ցուցակի մէջ նաև իր Պարթև թագաւորներից երկու — երեքին։ Այսպէս Վաղարշ, Խոսրով Ա. և Տրդատ, նոյնպէս Արտաւան և Արտաշիր՝ առնուած են Ագաթանգեղոսից Տիզրան, Սանատրուկ, Խոսրով Բ., Տիրան, Արշակ, Պապ, Վաղարշակ, Արշակ Բ. և նոյն իսկ Սանեսան Շապուհ՝ Փաւստոսից. Արշամ և Աբգար՝ Լաբուբնայից Արտաշէս՝ Կորիւնից Արտաւազդ՝ Եղնիկից և կամ ժողովրդական աւանդութիւններից (եթէ թոյլ տանք, թէ Անանուն ծանօթ չէր Յովսեպոսին, Հր. Հն. ԺԵ. գ, 3, Պատ. Հր. Ա. ԺԹ, 5). Արշաւիր՝ Եւսեբիոսի ժամանակագրութիւնից. վերջապէս, Երուանդը կազմուած է Երուանդաշատ քաղաքի անունից (Փաւստոս) և կամ գուցէ յետ ժամանակի ժողովրդական աւանդութիւններից։

Բ

Անանունի նպատակը

Անանունը միայն մէկ նպատակ ունի՝ փառաբանել Բագրատունեաց տունը։ Նա կամենում էր հանդէս բերել Բագրատունեաց ծագման հնութիւնը, որ՝ իբր թէ, Նաբուզոդոնոսորի ժամանակներն էր հասնում, և միեւնոյն ժամանակ նկատելի կերպով շեշտել այն մեծարանքը և այն բացառիկ վիրքը, որ վայելում էր նոյն իշխանական տոհմը՝ որպէս թէ պեռ առաջին երկու Հայոց հարստութիւնների՝ Հայկազունեաց և Արշակունեաց ժամանակ։ Եւ այս այնպիսի մի ժամանակամիջոցում, երբ Անանունի մօտ չը կայ յիշատակութիւն և ոչ մէկ ուրիշ հայկական իշխանութեան մասին։ Այս միթէ նպատակաւոր զրուածք չէ։

Այսպէս՝ Հայկազունեաց առասպելական հարստութեան ժամանակ, Բագրատունիք իրենք եւս հայկազեան ծագմամբ, տիրում են արեւմուտքում մի առանձին զաւառի, որ

Անդեղ—տան է կոչվում (և որը իսկապէս, պատկանում էր նորան Է.ՈՐԴ—Թ.ՈՐԴ դարերում). իսկ Բագարատը անդամ ասուած է կոչուած։ Առաջին հայ Արշակունու օրերում (Քրիստոսական թուականից երկու դար առաջ)՝ Բագարատը երկրի առաջին և ամենափառաւոր իշխանն է, իսկ իր զուտեր ամուսնութեամբ առաջին Արշակունու հետ նա դարձաւ՝ բաց ի զորանից, նաեւ ազգական Հայոց Թագաւորի՝ նորա «Հայր և եղբայր»[1]։ Այդ, անշուշտ յիշողութիւն է (reminiscence) իսկական անցքի, որ յետոյ է տեղի ունեցել, այն է՝ Արշակունեաց մէկի, Վաղ—արշակի, Բագրատունի Ասպետի տոհմի հետ՝ Քրիստոսական Դ. դարու վերջում։ Արդարեւ, Պապի որդին Վաղ—արշակ ամուսնացաւ Ասպետի զուտեր հետ, մինչդեռ նորա աւագ եղբայր Արշակը պսակուած էր սպարապետ Մանուել Մամիկոնեանի զուտեր հետ։

1. Մեքիռոսի առաջին հրատարակիչը (էջ 22–24), որ բոլորովին չէր կասկածում Անանունի պատմածի ճշտութեան մասին, ամենալաւագ կերպով հիմնում էր Բագրատունեաց և Արշակունեաց ազգականութեան իրողութեան վերայ առաջինների իրաւունքը Հայոց Թագաւոր գահին Թ. դարում։

Նոյն իսկ Բագրատունիք, Փաւստոսի ասելով (Ե., 44) «Թագակապք լեալ էին ի բնէ ազգին Թագաւորութեան Արշակունւոյ»։ Անանունի այս ճարտար ազգակցական զուգադրութեան մէջ, ուր յիշեալ դէպքը 600 տարով կանխած է, կարելի չէ չը նկատել իբրեւ նորը ակնարկ Բագրատունեաց նախապատիւ իրաւունքին Հայոց գահը ժառանգելու՝ իրենց մերձաւոր ազգակից արշակունիներից յետոյ, — մի նպատակ, որին, յիրաւի ձգտում էին նոքա Ը.ՈՐԴ դարու ընթացքում և հասան իրենց նպատակին միայն Արշակունեաց հարստութեան բառնալուց 450 տարի յետոյ՝ այն է 887 թուին։

Անհասարակ, չը նայելով Անանունի պատմութեան կարծեցեալ պարզութեանը, անաղուեստականութեանը և՝ ըստ երեւութին, նոյն իսկ անկապութեանը, հեղինակը կարելոյն չափ աջող կերպով ներկայացրեց և շեշտեց Բագրատունեաց միտումը (tendence), որի համար, իսկապէս, և մտածուած է մեր քննութեանը ենթարկած յիշատակարանը։

Գ

Անանունի կապը Սեբիոսի հետ

Մենք արդէն զիտեցինք, որ Անանունը իր մի քանի աղբիւրներից՝ ամենից աւելի մօտ ծանօթ է Սեբիոսի Պատմութեանը. նա իւրացրեց այդ հեղինակի ոճը, գրութիւնը և եղանակները, փոխ առնելով նորանից ոչ սակաւ բնորոշ դարձուածքներ և համարեա բոլոր աշխարհագրական անունները: Այդ՝ Անանունի, այսպէս ասած, արտաքին կապն է Սեբիոսի հետ:

Սակայն Սեբիոսը ունէր Անանուն հեղինակի համար և մի ուրիշ՝ աւելի թանկագին յատկութիւն իր ներքին բովանդակութեան և իմաստի կողմանէ. լինելով Բագրատունեաց եպիսկոպոս՝ նա միեւնոյն ժամանակ, ինչպէս յայտնի է, էր և առաջին պատմագիր Բագրատունեաց տոհմին. նորա «Պատմութիւն ի Հերակլ» գրուածքի մէջ բաւական չափով մենք գտնում ենք հետաքրքիր նկարագիրներ և յիշողութիւններ Բագրատունեաց մասին և մանաւանդ նոցանից ամենապատնծալի և երիցագոյն իշխան Սմբատ Բագրատունու († 618) մասին: Սորանից իսկապէս և սկսում է Բագրատունեաց բարձրանալը և զօրանալը, որոնք երկու դար յետոյ ձեռք բերին նաեւ թագաւորական գահը:

Բագրատունեաց փայլուն գարգլխի ժամանակակիցներին կարող էր բնական երեւել ենթադրելու, թէ նոյն իշխանութեան ներկայ վիճակը հաւանականօրէն ունեցել է և ոչ պակաս փառաւոր անցեալ: Գուցէ Բագրատունի իշխանաց իշխաններին անգամ՝ պէտք էր քաղաքական նպատակներով շեշտել այդ անցեալը՝ և նոյն իսկ անցեալի վերայ հիմնել իրենց ներկայ յաւակնութիւնները: Այն ինչ հայոց պատմագիրները մինչեւ Սեբիոս շատ սակաւ էին հաղորդում Բագրատունիների մասին այնպիսի բան, որ ուշադրութեան արժանի լինէր Անանունի տեսակէտից: Յանկարծ տեղեկութիւնների բացակայութեան պատճառով՝ կարիք զգացուց յօրինել Հայաստանի հնագոյն պատմութիւնը և արդէն նորա մէջ պատշաճաւոր տեղ տալ Բագրատունեաց իշխանութեան: Այդ աշխատութիւնը այնպիսի մի վկայագիր պէտք է ձեւացնէր, որ հաստատէր նոյն տոհմի

հնութիւնը և ազնուութիւնը անդամ ի վեր միւս բոլոր նախարարութիւնների տոհմական աւանդութիւններին։ Ինքը վկայագիրը՝ անվաւեր գրուածքներում ընդունուած սովորական կազապարով, որ յայտնի էր ի միջի այլոց և Ս. Գրքից (հմմտ. Գիրք Եզրի), պէտք է ներկայացնէր արքունական պալատի սեան վերայ գրոշմած «արձանագրութիւնը», իսկ նորա ծագումը կապուած պէտք է լինէր՝ ըստ Անանունի, ամենահեղինակաւոր անձանց հետ, — ամ կողմից Տրդատի Հայաստանի առաջին քրիստոնեայ թագաւորի հետ, և միւս՝ Ագաթանգեղոսի, առաջին հայ պատմագրի հետ, որ ընդ սմին յիշում էր Բագրատունեաց թագակալ տոհմը, առանց սակայն նոցա տոհմական անունը տալու։ Ուստի պէտք էր նոյն Ագաթանգեղոսի անունից վերսին հաստատել, — և այս անդամ վաւերական գրութեամբ — այն է՝ «արձանագրութեան» մէջ, Բագրատունեաց այդ պատուաւոր գիրքը թագաւորներից ամենափառաւորի՝ Տրդատի ժամանակ, և նորանից էլ առաջ, յիշելով այս անդամ և նոցա տոհմական կոչումը։ Աւելի արժանահաւատ կացուցանելու համար պէտք էր, որ «արձանագրութիւնը» գտած լինէր Մա-

բարայ Փիլիսոփան՝ Մծբինում, և այն՝ Փաւստոսի յիշած (Դ. 14) Մծուրք քաղաքի հիմնադիր՝ Սանատրուկ Հայոց նախկին թագաւորի պաշտամ աւերակներում[1]։

Եւ այսպէս, այդ անվաւեր գրուածքը երեւան է գալիս իբրեւ բնական լրացումն Սեբէոսի Բագրատունեաց Պատմութեան, մի լրացումն, որ պարունակում էր նոյն պատմաբանին անյայտ՝ բայց թանկագին տեղեկութիւններ այս նշանաւոր տոհմի առասպելական նահապետների մասին։ Այս իսկ պատճառով պէտք է նոյն գրուածքը կցած լինէր Սեբէոսին, որպէս նորա սկիզբը, և միանար նորա հետ՝ կորցնելով հեղինակի անձնաւորութիւնը և այդու անվաւերական դառնալով։ Առանձին՝ իբր ինքնուրոյն երկ, այդ յիշատակարանը՝ իմ կար-

1. Ըստ երեւութին՝ Սանատրուկի պալատի սեան Պարսից գուռը պահանջելը՝ ըստ Անանունի (էջ 1), կախում ունի Փաւստոսի (Դ, 24) հաղորդած պատմութիւնից՝ հայոց թագաւորների գերեզմանների կործանման մասին պարսիկների ձեռքով (Դ. գարում Ք. յ.), որոնք չը կարողացան բանալ Սանատրուկի շիրիմը «վասն անհեղեղ սկայագործ հաստաշինած ճարտարագործ արարածոցն»։

ծիքով, հազիւ թէ երբ և իցէ գոյութիւն ունեցած լինի։

Մեզ հետաքրքրող անանուն Հատուածը չէր կարող կցած լինել և միւս հայ պատմագիրներին. Ագաթանգեղի սկզբումը, օրինակ, նա բացարձակ հակասութիւն կ'երևէր «Հայոց դարձի պատմութեան», ուր ոչինչ այդպիսի չէ յիշվում ոչ Բազրատունեաց և ոչ Պարթեւաց ու Հայոց թագաւորների ցուցակերի մասին։ Բաց ի դրանից, հակասութիւն կը լինէր և Ագաթանգեղոսին յաջորդող ու նորա աշխատութիւնից օգտուող պատմագիրներին, որոնց նոյնպէս ոչինչ յայտնի չէր Բազրատունեաց տոհմապետների մասին այն ձեւով, ինչպէս Անանունն էր այդ հաղորդել։ Եւս աւելի անտեղի կը լինէր մեր Հատուածը Սեբէոսի նախորդ հեղինակների պատմութեան սկզբում, այսինքն Փաւստոսի, Փարպեցու և Եղիշէի, որոց գրուածքները նուիրուած են բացառապէս Մամիկոնեանց փառաբանութեան՝ այդ հզօր նախարարական ցեղի, որ ահեղաբար մրցում էր Բազրատունեաց հետ Է.-րդ — Ը.-րդ դարերում Հայաստանի գերագոյն իշխանութիւնը ձեռք բերելու համար[1]։

1. Հմմտ. Ղեւոնդ, հրատ. Ս.-Պետերբ., 1887, էջ 123–124, Ասողիկ, էջ 104։

Դ

Անանուն Հատուածի կազմելու ժամանակը

Անանունի արդէն անուրանալի յարակցութիւնը Սեբէոսի հետ ցոյց է տալիս, որ նա կազմուած է ոչ վաղ, քան Է. դարու վերջում (Հերակլի պատմագիրը իր գրութիւնը հասցնում է մինչեւ Մաւիաս խալիֆան, որ իշխեց 664–680 թ.)։ Բաց ի դրանից, նոյն իսկ մեզ հետաքրքրող գրուածքում կան հիմունքներ՝ բաւական ճիշտ որոշելու այն ժամանակամիջոցը, որից առաջ նա չէր կարող գրուած լինել, այսինքն՝ դարձեալ ոչ վաղ, քան Է. դարը։ Կիլիկիան յիշվում՝ է Անանուն հատուածում (էջ 9), որպէս Պարթեւաց թագաւորութեան մի մասը. այն ինչ ճիշտ յայտնի է, որ Պարթեւները երբէք չեն տիրել այդ երկրին. նորան գրաւեցին, այն էլ ոչ երկար ժամանակով, Սասանեանները՝ առաջին անգամ խոսրով Անուշիրուանի (531–578 թթ.), երկրորդ ան-

զամ՝ Խոսրով Ապրուէզի օրով[1], Իսկ եթէ համաձայնենք իմ՝ վերը յայտնած ենթադրութիւնների հետ, թէ Անանունը, արդարեւ, օգտուել է Յովհան Փիլիսոփայի կամ Օձնեցու աշխատութիւնից, Օձնեցու՝ որ կառավարեց Հայաստանեաց եկեղեցին 722 թուականից մինչեւ 733 թ., — ապա Հատուածի կազմելու ժամանակը պէտք է մերձեցնենք Ը. դարու կիսին։

Միւս կողմից, Անանունի երեւան գալը չէր կարող և Ժ.ՈՒ դարից ուշ լինել, որովհետեւ արդէն Թովմա Արծրունին, որ ապրում էր Թ. դարու վերջին և Ժ.ՈՒԷ սկզբին, բառացի քաղուածք է անում նորանից[2]։

1. Տես Սեբէոս, էջ 28 և 81. հմմտ. նաեւ Fabari, Nöldeke, էջ 290 և հետեւեալն։

2. Հրատ. Ս.-Պետերբ. 1887, էջ 22–23։ Համեմատենք երկու դրուագների նման կէտերը.

Անան. (էջ 3) . . .	Թովմա (էջ 22–23) . . .
Յայնմ ժամանակի թագաւորեաց ի Բաբելոն սրսորդ Հսկայ Բէլն . . . Հզաւր զաւրռեալն . . . Որոյ արարեալ առ աչաւք կախարդութեամբք հնարս և հրաւ	Իսկ Նեբրովթ ինքնակիմաբար ասաց զինքն աստուած և թագաւորեալ ի Բաբելոնի սաստիկ զօրռեալն՝ առներ և նշանս կախարդութեամբք և առ աչօք . . .

Ենթադրելու է, որ Անանուն հատուածը ծանօթ էր և Յովհաննէս Կաթողիկոս պատմաբանին (Թ. դարում)՝ հակառակ Ա. Բառմդարանների պնդելուն (ZDML, XL, 466, ծանօթ. 1), և Աստղիկին (Ժ.–ԺԱ. դ.), որովհետեւ անկասկած է, որ սոքա օգտուել են Սեբէոսից, որի սկզբումը, հաւանականօրէն, զետեղուած էր և մեր Հատուածը։ Բայց երկու պատմագիրներն եւս հարկ չեն համարել յիշել իրենց կարծիքով

մանաւ թագաւորականս ամենայն ազգաց և հըպարտութեան ամբարտաւանութեան իւրոյ կանգնեաց զպատկերն իւր և ետ երկիր պագանել իբրեւ աստուծոյ և զոհս մատուցանել։	Եւ տիրեաց ամենայն ազգաց որ ի ներքոյ երկնից. և ետ հրամանս մեծաւ՝ ամենայն սրբոք կանգնել զպատկեր իւր և երկիր պագանել իբրեւ աստուծոյ և զոհս մատուցանել։
(Նոյն տեղուն, էջ 4). Շուն ես դու (ասէ Հայկ ցՌէլն) և յերամակի շանց՝ դու և ժողովուրդ քո։	(Նոյն տեղում, էջ 25) . . . ոչ միայն զի չես աստուած (քամահէ Հայկ զՌէլ), այլ շուն դու և երամակ շանց, որ զկնի քո տողեալ սահին։

և Խորենացու վկայութեամբ՝ այսպիսի մի ս-
ղոտմելի գրութեան մասին, մանաւանդ, որ
նոյն բովանդակութիւնը նոքա ունէին իրենց
առջեւ՝ մշակուած Խորենացու հրաշալի նկա-
բագրութեամբ։ Զէ՞ որ Աստղիկ բաց է թողել
իր ժամանակագրութեան մէջ «Հայոց Պատ-
մութեան» ամբողջ առաջին գիրքը, այսինքն
ազգային պատմութեան առասպելական շրջա-
նը, ըստ Մովսիսի. բայց ոչ ոք այս հիման
վերայ չէ ենթադրել, թէ նա չունէր իր
ձեռքում Խորենացու Պատմութեան լիակա-
տար օրինակը։ Այսպէս ուրեմն Ը.ՊԳ դարու
կիսու և Թ—որդի վերջի միջև որոնելու
է մեր Հատուածի կազմելու ժամանակը։

Ե

Ի՞նչ վիճակում է հասել մեզ Հատուածը

Սոյն խնդրին վերաբերեալ՝ գիտնական-
ների արած բոլոր դիտողութիւնները, ինչպէս
տեսանք, կարելի է ամփոփել հետեւեալ կէ-
տերում. թէ մեր Հատուածը ենթարկուել է
ոստիկ աղճատման. թէ նորա մէջ կան
յապաւումներ՝ և երբեմն ընդարձակ. թէ,
վերջապէս, նորա կազմելու մէջ նկատւում
է մի քանի հեղինակների մասնակցութիւն,
այն է՝ Մծուրնացի Մարաբայի, Անանունի
և մի երրորդ անձնաւորութեան։

Առաջին կէտի մասին պէտք է գիտել,
որ՝ գուցէ, բաց ի յառաջաբանի երկու սկզբ-
նական տողերից և Աշտարակաշինութեան
նկարագրութեան երկու—երեք տողերից (էջ
2), որոնք կարող են ընդունուիլ և իբրեւ
ոճի նմանութիւն կամ աղօտութիւն, բոլոր
մնացած մասը՝ իմ կարծիքով, չէ ներկայա-
ցնում այնպիսի աղճատումն, որ զգալի կեր-
պով արգելք լինէր բնագիրը ճիշտ հասկա-

նալուն. ինչ ինչ վրիպակներ և սխալներ կարող էին՝ ի հարկէ, սպրդուիլ Հատուածի մէջ ընդօրինակողների անուշադրութիւնից, սխալներ, որից սակայն զերծ չէ ոչ մի քիչ թէ շատ հին յիշատակարան, մանաւանդ այնպիսին, որ ծանօթ է մեզ միայն երկու զբաղիր օրինակից։

Հաղիւ թէ հիմնաւոր են և այն ենթադրութիւնները, որ յայտնած էին Հատուածի թերի կամ կիսատ լինելու մասին։ Օրինակ, Ն. Յ. Մառ[1] կարծում է, թէ բաց են թողած Աբրահամի սարկուհի՝ Մարսեակի երկոչ որդոց անունները և սորա սերունդների վերաբերեալ մանրամասնութիւնները Հայաստանում — անմիջապէս Անանունի պատմած «Ապատամբութիւն Պարթեւաց» անցքից առաջ (էջ 6—7)։ Բայց այս կարծեցեալ թերութիւնը բացատրվում է մեր Հատուածի նոյն տեղում առաջ բերած «Փառսիա» և «Փառական» կոչումներով, որովհետեւ սոքա են իսկապէս Աբրահամի սարկուհու խնդրելի որդիքը, որոնք իրենց անունները տուին յայտնի տեղերին։ Ըստ երեւութին՝ այսպէս էր

1. Տե՛ս վերը յիշած նորա ուսումնասիրութիւնը Անանունի մասին, էջ 21։

հասկանում նոյն տեղը և Հատուածի ռուսերենի թարգմանիչ Բ. Պատկանեան (էջ 7—8)։ Առհասարակ, ես կարծում եմ, որ մեր յիշատակարանը իր ծագման սկզբում իսկ ունէր այսպիսի կցկտուր, հատուածական բնաւորութիւն, մի տեսակ նախագծի կամ անկատար զրուածքի կերպարանք՝ ընդ սին մի քանի նպատակաւոր անտեսութիւններով։ Եւ ուրիշ կերպ չէր կարող լինել. Անանունին, որ առաջնորդվում էր արդէն մեզ յայտնի նպատակով՝ փառաբանել Բագրատունիներին, պէտք էին կարճ, բայց աջող ակնարկներ «արձանագրութեան» յատուկ հատուածականութեամբ. իսկ զրուածքի արտաքին մշակումը և կատարելութիւնը նորա նպատակից դուրս էին։ Ի զուր չէր Խորենացին ասել այդ զրութեան մասին. «ի բայ բանից և անօճ խմն յաղագս Հայկայ և նմանեցոյն կատարէ» (Ա., 22)։

Ինչ վերաբերում է մի քանի անձանց մանակցոբեանը Անանուն զրուածքի կազմելում՝ այդ կարծիքն ևս շատ քիչ հաւանականութիւն ունի։ Արդէն հեղինակի լեզուի ու զրութեան միակերպութիւնը, մի և նոյն ազբիւրների զործածութիւնը բոլոր յիշատակարանի մէջ, վերջապէս և զրուածքի

ամբողջութիւնը՝ նորա մէջ տիրող կանխակալ նպատակի վերաբերմամբ, որ անցնում է ծայրէ ծայր՝ բոլոր Հատուածի միջով, հակասում են այդ տեսակ ենթադրութեան։ Իսկ հեղինակաւոր անձանց՝ Աստրի Մարաբայ Փիլիսոփային, առաջին Հայոց պատմագիր Ագաթանգեղոսին և առաջին քրիստոնեայ հայ թագաւոր Տրդատին վկայ կոչելը՝ հռչակաւոր «արձանագրութեան» աբքունական ապարանքի աւերակներում գտնուելու մանրամասնութիւնների հետ միասին, — անվաւեր գրուածքների մեծամասնութեանը յատուկ արուեստական եղանակ է[1] նպատակաւոր մոտացածին յիշատակարանին, ինչպէս դիտել էինք, հաւատիութիւն ընծայելու դիտմամբ։

* * *

Անանուն Հատուածի Հութիւնը պարզելուց և նորա կազմելու ժամանակը որոշելուց ինքնըստինքեան լուծվում է և Խորենացու դէպ ի նա յարաբերութեան խնդիրը։

1. Հմմտ., օրին, իմ հետազօտութիւնը նման անվաւեր գրուածքի մասին՝ «Ձենոբ-Գլակ», Վիեննա, 1893, էջ 61 և հետև.։

Մովսէսը, ինչպէս հիմնաւոր կերպով ապացուցանում է պրոֆէսոր Կարիէը, ապրել է Ք. ՈՐԴ դարուց ոչ վաղ և մինչև անգամ Թ. ՈՐԴ դարու զկզբում։ Դորանում մենք աւելի ևս կը համոզուինք մեր հետազօտութեան մէջ բերած մի քանի նոր հանգամանքների հիմամբ. ուստի հասկանալի է, որ Խորենացին ապրելով Անանուն Հատուածի երեւան գալուց յետոյ, կարող էր նորանից օգտուել։ Բայց մենք ունինք և անբերկրայ ապացոյց՝ թէ հայ պատմաբանը արդարեւ ծանօթ էր Անանունի գրուածքին։ — Վերը մենք տեսանք, ինչպէս Բագրատունեաց տոհմապետ Բագարատին, որ ապրել է Նաբուզոդոնոսորից փոքր ինչ յետոյ, Անանունը առաջ է բերում Հայկի որդի՝ Արամանեակի սերունդից, իսկ Խորենացին իր պատմութեան Ա. գրքի 22-դ գլխում, խօսելով Բագրատունիների ծագման մասին Շամիրամից, որ Նաբուզոդոնոսորի գերի վարած գլխաւոր Հրեաներից մէկն էր, և յետոյ վերաբնակուեց Հայաստան, — եռանդուն կերպով համոզում է իր մեկնողին հաւատ չընծայել նոցա, որ Բագրատունի տոհմը առաջ են բերում Հայկից։ «Քանզի ասեն ոմանց անհաւատի մարդոց ըստ յօժարութեան և ոչ ըստ ճշմարտութեան,

ի Հայկայ զթագաւիր ազգդ լինել Բագրատունեաց։ Վասն որոյ ասեմ. մի այսպիսեաց յիմար բանից հաւանիր, զի և ոչ շաւիղ կամ ցուցում զոյ նմանութեան յասացեալսդ՝ որ զարդարութիւն ակնարկէ. զի ի բայ բանից և անոճ իմն յաղագս Հայկայ և զնմանեացն կակազէ։ Բայց ծանիր զՄՄրատ անուն, զոր յաճախ Բագրատունիք ի վերայ պատանեաց կոչեն, ճշմարիտ Շամբաթ է՝ ըստ նախնի իւրեանց խօսիցն, որ է Եբրայեցի»։

Այսոքանչից պարզ է, որ յիշեալ զարձուածքներում Խորենացին ակնարկում է իսկ և իսկ Անանուն Հատուածը, որովհետեւ Հայոց ամբողջ հին գրականութեան մէջ չը կայ բայ ի Անանունից մի այլ գրուածք, որին այդքան ճիշտ յարմարուէր հայ պատմագրի տուած բնորոշ և աջող կոչումը «ի բայ բանից և անոճ իմն... կակազէ»։ Միայն Անանուն գրուածքն է մատնանիշ անում Բագրատունեաց հայկական ծագման վերայ, որի դէմ այնպէս խիստ զինվում է Մովսէս։ Նոյն իսկ այդ իշխանութեան հրեական ծագման գաղափարը՝ ըստ ամենայն հաւանականութեան, ներշնչուած է երեւում Անանունից, որովհետեւ սա Բիբլիական «Փաբարաղ» անունից, որ պատահում է Նաբուգոդոնոսորի

գերի վարած հրէաների թվում, յարմարեցրեց նոյն աշխարհակալի ժամանակամիջոցին և՝ բնիկ հայկական Բագրատունեաց ցեղի տոհմապետ Բագարատին՝ անուններին նմանութեամբ։ Այդ իսկ պարագաներից Մովսէս եզրակացութիւն արեց, յայտնի չէ թէ՝ ինչից զրդուած, Բագրատունեաց հրեական ծագման մասին։

Սակայն չը նայելով իր արհամարհական կարծիքին Անանունի մասին, Խորենացին չը մերժեց բոլորովին, ինչպէս կը տեսնենք, նորա աշխատութիւնը. նա գրեց այդ գրուածքը «Հայոց Պատմութեան» հիմքը, որպէս Նախագիծ, և մշակեց ու ընդարձակեց նորան՝ ճոխացնելով նորանոր մանրամասնութիւններով և միանգամայն նոր կերպարանքով ներկայացրեց ոչ միայն իր մեկենասների նախնիք՝ Բագրատուններին, այլ և իր հայրենիքի ամբողջ սկզբնական պատմութիւնը։

Ահա թէ ինչ մտքով հասկանալու է Գուաշվիլի վերին ասութեանի սրամիտ նկատողութիւնը, թէ Անանուն Հատուածը Խորենացու առաջին ստուերագիրն էր։

Եւ հարկ թէ վստահութիւն համարուի ընդունել նշանաւոր գերմանացի քննադատի խօսքերը նոցա ուղիղ՝ բառացի իմաստով,

այսինքն թէ՝ «Հատուածը» պատկանում լինի նոյն Մովսէսի գրչին, որպէս նորա «Հայոց պատմութեան» նախապատրաստական ծրագիր։ Յամենայն դէպս՝ երկու գրուածքների ժամանակակցութիւնը (Ը–Թ. դար) և մանաւանդ երկու հեղինակներին ընդհանուր՝ այնքան բնորոշ համանման եղանակները, դիտաւորութիւնները և նպատակաւոր միտումները շատ ծանրակշիռ փաստեր են, որ կարելի լինէր արհամարհել նոցա ու կամ դիւրին կերպով նոցա բացատրել։



ՑԱՆԿ

	Էջ
Աղդ	5
Մարաբա Մծուրնացի կամ կեղծ–Ագաթանգեղոս	7
— Ա. Անանուանի հատուածի էութիւնը և նորա աղբիւրները . . .	27
— Բ. Անանուանի նպատակը . .	75
— Գ. Անանուանի կապը Սեբէոսի հետ .	78
— Դ. Անանուան Հատուածի կազմելու ժամանակը	85
— Ե. Ի՞նչ վիճակում է հասել մեզ Հատուածը	87

6344
6345
6346
6347
6348

0001997

ՀՀ Ազգային գրադարան
NL0002305

ՀՀ Ազգային գրադարան
NL0002304

ՀՀ Ազգային գրադարան
NL0002303

ՀՀ Ազգային գրադարան
NL0002302

ՀՀ Ազգային գրադարան
NL0001997